

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
Organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԿԿ

№ 8
A O U T
1932
PARIS (France)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒԹԵԱՆ ԴԱՆՆԵԿՑՈՒԹԵԱՆ» ԳՐԿԱՆ

ԺՐՆԵԻԻ ԵՒ ԼՈՉԱՆԻ ԴԱՍԸ

Ինչքան եւ կամենանք սահմանափակել միայն ներքին ապրումներով, անկարելի է կտրել համաշխարհային կեանքի դէպքերից, որոնք երթալով աւելի ու աւելի խոռվայոյց են դառնում: Աշխարհը վեր է ածւած փոթորկայից ովկիանի, որի անդուպ այիքների տարեւային թափի առջեւ անդր են թոււմ մարդկային կամքի բոլոր ճիգերը:

Եւ, իրօք, աւելի քան ողորմելի գալարումներ են ցարդ մարդկութեան գործադրած փորձերը խոռված տարերքը գալելու համար: Խորհրդաժողով յաջողում է խորհրդաժողովին. վէճ, կիրք, յայտնի ու գաղտնի դաւեր, յարաբերութիւնների լարում, բարեկամական համաձայնութիւններ, իրաւաբարութեան ու ոչ-յարձակման դաշինքներ — իսկ սայլը ոչ միայն սեղից չի շարժոււմ, այլ եւ աւելի եւս խրոււմ է միջազգային ցեխի մէջ:

Այս տեսակէտից, մանաւանդ, հարուստ եղան վերջին ամիսների դէպքերը՝ բազմապիսի հսկայ ծրագիրներով եւ ձեռք բերւած չընչին արդիւնքով: Հէնց, օրինակի համար, գիւնաթափութեան խորհրդաժողովը ժընելում, որ նոր ընդհատեց իր աշխատանքները: Մեծ ու փոքր պետութիւնների թաղաքական ու գիւնւորական ամենաակնաւոր դէմքերը, տասը տարւայ նախապատրաստական աշխատանքից յետոյ, վեց ամիս անընդհատ տքնեցին աշխարհի խաղաղութեան գաղտնիքը գտնելու նպատակով, բայց, կարելի է ասել, բոլոր հիմնական խնդիրները մնացին չլուծւած: Անգամ Հուլիսի միջապետութիւնն ու բանեցրած ճնշումը չօժափելի հետեւանքներ չտեց: Ընդունւած բանաձեւը իր ճոճւանն ու մեծախոստում նախարանով եւ խղճով կերակարութիւններով չի կարող գոհացնել եւ ոչ մէկին: Հո չի՞ կարելի գիւնաթափութիւն համարել օդային ուժբակոծութեան կամ քիմիական ու մանրէական

պատերազմի արգելքը... Թղթի վրա: Չէ՞ որ 1907 թ.ին էլ նման արգելք դրեց Լահէի խաղաղութեան խորհրդաժողովի կողմից: Ի՞նչ արգելեց, որ պատերազմի ընթացքին կուղ կողմերը լայնօրէն կիրաւեն հեղձուցիչ գաղը, որէս յարձակման դէնք:

Նոյնպէս եւ Լոզանի խորհրդաժողովը՝ փախադարձ պարտքերի եւ հատուցումների խնդրի կարգադրութեան համար: Ի՞նչ գործնական հետեւեց ունեցաւ այդ հաւաքոյթը: Եթէ մի կողմ դնենք յունիս 16 համաձայնութիւնը վճարումների յետաձգման մասին, որ իրապէս կատարւած փաստի արձանագրութիւնն էր միայն, եթէ հաւել չառնենք Փրանս-անգլիական մերձեցման նոր ճիգերը, Լոզանի խորհրդաժողովի գործնական արժէքը կը լինի աւելի քան կասկածելի: Որովհետեւ, վերջ ի վերջոյ, ի՞նչ է Լոզանում ձեռք բերւած արդիւնքը. ընդունելով հանդերձ հատուցումների եւ պարտքերի ջնջման կամ կրճատումի անհրաժեշտութիւնը՝ շահագրգռւած պետութիւնները խնդրի կարգադրութիւնը թողնում են այն օրւան, երբ Ամերիկան համաձայնութիւնը կամ կրճատել եւրոպայից ունեցած դրամական պահանջները: Իսկ Ամերիկայի համաձայնութիւնն, ի նարկէ, կախւած է Լոզանի խորհրդաժողովին մասնակցողների կամքից:

Այսպէս անփառունակ կերպով վերջացան երկու խոշոր միջազգային խորհրդաժողովները, որոնց հետ այնքա՞ն յոյսեր էին կապւած աշխարհի տէրերի կողմից: Այդ խորհրդաժողովները ո՞չ միայն չթուլացրին միջպետական հակամարտութիւնները, ոչ միայն չնպաստեցին տնտեսական տագապի մեղմացման, այլ է՛լ աւելի հրահրեցին ու, սրեցին՝ դուռ բանալով նոր կասկածների ու մրցակցութեանց:

Նոյն կարգի երեւոյթներ են եւ այն դէպքերը, որոնց սկանաւտես եղանք վերջերս աշ-

խարհիս երեք մեծագոյն պետութիւնների ներ-
որ — Միացեալ Նահանգներում, Մեծ Բրիտա-
նիայում, Գերմանիայում և Նախագահական
նախընտրական պայքարը Միացեալ Նահանգնե-
րում, Հանրապետական ու ռամկավար համա-
գումարների Երեքսուրում, ըստ ձեւի թէկուզ
ազգային, խոշոր չափով բռնւած են միջազգա-
յին մտահոգութիւններով: «Փառաւոր մեկուս-
ացումն» այլեւս չի օգնում, տնտեսական ներ-
կայ տագնապը աւելի քան երբեք ցոյց տւեց,
որ Ամերիկան էլ մէկ օղակն է տիեզերական
համակեցութեան եւ կամենայ թէ ոչ՝ պարտա-
ւոր է հաշի առնել եւ յարմարել արտաքին
աշխարհում կատարող դէպքերին:

Համաշխարհային տագնապի հետեւանջ-
ներն աւելի ուժգին թափով անդրադառնում են
Բրիտանական կայսրութեան կեանքում: Օթա-
ւայի խորհրդաժողովը, ուր փորձ է լինում
մշակելու տնտեսական նոր հիմքեր անգլիական
տիրապետութեան՝ յարատեւման համար, իր
մինչեւ այժմ յայտնաբերած մտայնութեամբ,
մի փորձ է բարելաւելու սոսկ ներքրիտանական
կացութիւնը: Միջազգային տեսակէտից Օթա-
ւան յետադիմական քայլ է, բրիտանական հա-
մակեցութեան մաս կազմող երկրները արտա-
քին աշխարհից մեկուսացնելու: Ինքնամփոփ
վիճակի վերածելու մի ջանք: Պէտք է յուսալ,
սակայն, որ տնտեսական անհրաժեշտութիւնը
դուրս կը գայ աւելի զօրուոր, քան անգլիա-
կան պահպանողականների ներմիտ ու եսա-
պաշտ երազները:

Գալով Գերմանիային՝ այստեղ դժւար է
միայն տրամաբանութիւն փնտրելը: Հիտլեր-
եան գրոհը սնունդ է ստանում ո՛չ միայն գեր-
ման Ժողովրդի գիտակցութիւնից, այլ, նախ
եւ առաջ, գրգռւած զգացմունքից: Վէրսալից
13 տարի յետոյ, Գերմանիան ոչ միայն իր վրտ
դրւած բացառիկ պարտաւորութիւններից է
ուզում ազատուել, այլ եւ հաւասար տեղ դրա-
ւել միւս պետութիւնների շարքում: Մի ձրգ-
տում, որ ինչքան ճնշի արտաքին ուժերից,
այնքան աւելի հիւանդապին արտայայտու-
թիւններ կը ստանայ երկրի ներսը: Խորհրդա-
րանական րնտրութիւնները յուլիս 31ին աւելի
քան իստուն թւերով հաստատեցին այս փաս-
տը: Երբ Օթո Բրաուններին ու Բրիւնիդներին
օրինական միջոցներով չի յաղթուում ապահո-
վել «Գերմանիան՝ ամենքին հաւասար» սկզբ-
ունքը, դարմանալի չէ, որ ոյժ կը ստանայ
բռնուցքի ջատագով Հիտլերների ու Փոն-
Շլայխերների «Գերմանիան՝ ամենքից վեր»
ոսպմեքը:

Նոյն երեւոյթները սաղմնաւորում եւ ա-
ճում են նաեւ ուրիշ երկրներում: Ժրնեւեան ու
Լոզանեան կիսամիջոցներն այլեւս ոչ ոքին չեն
գոհացնում: Տիեզերական սպանդից 14 տարի
յետոյ, աշխարհ աւելի անխաղաղ է, կրքերն
ու յարաբերութիւնները աւելի են յարւած, քան

պատերազմի նախօրեակին: Ինչո՞ւ, ի՞նչն է
պատճառը այս վիճակի:

Պատասխանը պարզ է: Որովհետեւ պա-
տերազմը չվերացրեց մարդկութեան անդոր-
րութիւնը յուզող հիմնական շարիքներից եւ
ո՛չ մէկը: Ընդհակառակը, է՛լ աւելի սրեց ու
խորացրեց: Եւ պատերազմից յետոյ էլ ո՛չ մի
լուրջ փորձ չեղաւ դարմանելու կատարւած
սխալները, մեղմացնելու գործւած անարդա-
րութիւնները: Ինչպէս Վէրսալի օրերին, այս
օր էլ իշխողը մեծ պետութիւնների եւ տիրող
դասերի նեղ եսապաշտութիւնն է, ազահ շա-
համոյութիւնն ու զագանային մրցակցութիւ-
նը: Ամէն տեղ տիրական է պատերազմական
հոգեբանութիւնը: յաղթողներ ու պարտած-
ներ, զրկողներ ու զրկածներ: Մէկը դրաւել է
անբաւ հարստութիւն, միւսը գալարում է աղ-
քատութեան ճիրաններում: Մի կողմ ազգային
տենչերի չսպասած յաղթանակ, անդին՝ բռնի
ուժերով հաստատւած սահմաններ, ազգային
իրաւազրկում, յօշոտում ու վայրենի հարստա-
հարութիւններ: Եւ Ժրնեւեան ու Լոզանները
ձգտում են յաւերժացնել եւ ամրագնդել այս
կացութիւնը: Հնարաւոր է նման ձեւով լուծել
մահացու տագնապները կամ մեղմացնել թըշ-
նամական կրքերը:

Մարդկութիւնը կարօտ է գործունէութեան
բոլորովին այլ ձեւերի — փոխադարձ վստա-
հութեան ու համերաշխութեան, պետութիւն-
ների եւ Ժողովուրդների վերաբերմամբ գործ-
ւած անարդարութիւնների վերացման եւ,
առաջին հերթին, արդարութեան ու հաւասար-
ութեան սկզբունքի ապահովութեան: Քանի
կիսաթափուրեան համար Ժրնեւում ներկայ-
յացւած պետութիւնները կը ձգտեն պակասե-
ցնել ուրիշների զէնքերը, բայց իրենք կը յա-
մատեն մնալ զինւած, ո՛չ մի խաղաղութիւն չի
կարող հաստատուել աշխարհում: Քանի 70 մի-
լիոննոց մի Ժողովուրդը կը շարունակէ փակուած
մնալ Վէրսալի կառուցած գառազիղում, ան-
մտութիւն է Գերմանիային զգաստութեան
յորդոր կարողալ: Անհեթեթութիւն է ակնկա-
լել, որ տեւական խաղաղութիւն կը տրիէ Մեր-
ձաւոր Արեւելքում, թէկուզ հազար Ազգերի
Դաշնակցութիւն հանդիսաւոր ընդունելու-
թիւններ սարքէ Թիւրքիային, երբ անդին Հա-
յաստանը կը մնայ բռնադրաււած ու ամայի,
իսկ հայ Ժողովուրդը՝ անհայրենիք ու աստան-
դական:

Միջազգային խաղաղութեան եւ համերաշ-
խութեան համար անհրաժեշտ է ամենից առաջ
յարաբերութիւնների եւ հոգեբանութեան ար-
մատական փոփոխութիւն: Ընդունա՞կ են դրան
աշխարհի ներկայ վարիչ ուժերը: Ի հարկին,
ո՛չ: Այսօրւայ տնտեսական ու քաղաքական
տագնապները պատահական երեւոյթներ չեն:
Նրանք խորհրդանշում են սնանկութիւնը մի
ամբողջ հասարակակարգի՝ իր ուրոյն յարա-

բերութիւններով ու աշխարհահայեցողութեամբ: Մինչև զիշատիչ ընչաբազումութեան վրա խարսխած այսօրւայ կարգերն ու բարքերը չփոխին, մինչև աշխարհի կեանքին բովանդակութիւն և ուղղութիւն տուողը չլսանաւ մի նոր, իրական արդարութեան, հասարակութեան ու համերայխութեան ներքած

ոյժ, ո՛չ մի ժընեւ եւ ո՛չ մի Լոզան, տարաբխտարար, չեն կարող լուծել տիրող տագնապներն ու շօշափելի դարձան բերել մարդկութեան: Եւ իրաւագրկած ու ճնշւած ժողովուրդները չեն դադարեցնի, ու չպէ՛տք է դադարեցնեն իրենց պայքարը՝ յանուն ազատութեան:

ՀՍՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ *

I

ՇԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Մօտ 40 տարի առաջ էր, որ առաջին անգամ բարձրացել Հայաստանում շաքարի գործարան հիմնելու հարցը: Ենթադրում էր գործարանը հիմնել Ալեքսանդրապոլում: Նրանից յետոյ, մի քանի անգամ էլ փորձեր եղան այս ծրագիրն իրագործելու: Դրանց մէջ ամենաշարժար էր յայտնի շաքարագործարանատէր Բրոզակիի ձեռնարկն էր: Փոխանակ Ուկրայնիայից Կովկաս և Թիւրքիա ու Պարսկաստան շաքար փոխադրելու, Բրոզակին մտածում էր Հէնց Կովկասում կազմակերպել շաքարի արդիւնաբերութիւնը: 1910թ. նա ուղարկեց մասնագիտական մի յանձնաժողով՝ որոշելու համար չինեւիթէ գործարանի տեղը: Երկար հետազոտութիւններից յետոյ, յանձնաժողովը գտաւ, որ ամբողջ Անդրկովկասում ամենայարժար վայրը շաքարա-մշակութեան համար թէ կլիմայական և թէ հողի կազմի տեսակետից, Ալեքսանդրապոլի շրջանն է: Կատարւած փորձերը ցոյց տւին, որ շաքարի ճակընդեղի բերքը Ալեքսանդրապոլում աւելի բարձր է, քան նոյն իսկ Ուկրայնիայում: Ուստի, Բրոզակին որոշեց Ալեքսանդրապոլի փոխարէն Պոդոլսկի իր գործարանը և միաժամանակ ուղարկեց զիւղատնտես-մասնագէտներ, որոնք պայմաններ կնքեցին Երևակի զիւղագինների հետ՝ գործարանին ճակընդեղ մատակարարելու համար: Սակայն, վրա ճառակ պատերազմը և շատ ուրիշ ծրագիրների հետ, շաքարի գործարանի խնդիրն էլ ջուրն բնկաւ:

Պատերազմից յետոյ, շաքարի գործարանի հարցը նորից առաջ բաշխեց 1919-20 թւականներին, Հանրապետութեան օրով: Հայաստանի կառավարութիւնը աշխարհում ունէր սեփական շաքարի գործարանի կառուցումը: Թիւրք-բրոյնիկեան յարձակումը Հայաստանի վրա այս անգամ էլ արգելեց կառուցելու ծրագրի իրականացման:

Խորհրդային իշխանութիւնը միայն 1927թ. ուշադրութիւն դարձրեց շաքարի գործարանի անհրաժեշտութեան վրա: Դրան որոշ չափով նպաստեց և այն ճանգվածները, որ Երևակի զիւղագիւղից, Բրոզակիի փորձից յետոյ, շարունակեց ճակընդեղի մշակութիւնը: Ծակընդեղը Երևակի գիւղատնում ամենից ձեռնարկու րոյան է՝ գարին ու ցորենը շատ վտիտ բերք են տալիս: Ինական է, որ գիւղագիւղից ամենից ձեռնարկու րոյան է իր ուղում հրաժարելու ճակընդեղի մշակութիւնից:

Հէնց որ Թիֆլիսի «Ջարեկ Կատող» թերթում լույս տեսաւ Հայաստանի Ժողովրդ. Տնտ. Խորհրդի որոշման լուրը, Վրաստանի Ժող. Տնտ. Խորհուրդը անմիջապէս արտակարգ ժողով հրաւիրեց և 4 կոմունիստներից ու 4 մասնագէտներից մի յանձնաժողով

նշանակելով՝ հրահանգեց «Հարւածային կարգով», ամենակարճ ժամանակամիջոցում շաքարի գործարանի համար մի յարժար տեղ որոշել և իսկոյն ձեռնարկել հետազոտական աշխատանքների: Նոյնպէս «Հարւածային կարգով» այդ աշխատանքների համար յատկացեց 45,000 ռուբլի, մինչդեռ Հայաստանի կառավարութիւնը հազիւ կարողացել էր յատկացնել 3000 ռուբլի: Մի շարքի վրա ընթացում ցնորեց գործարանի տեղը, Գորի՝ Ագարա կայարանի մօտ: Վրաստանի երկրագործութեան գործավարը ճակընդեղի համար հող տրամադրեց նոյն քանակով ինչ քանակով որ տրամադրւած էր Հայաստանում:

Գորի-Ագարայի շրջանը յայտնի է իր բարձրորակ բոյսերով — խաղող և ընտիր պտուղներ: Այստեղից արտահանւում են արժէքաւոր պահածոներ, գինի և այլն: Շաքարի մէկ հեկտարը չի կարող տալ նոյն իսկ 40՛,6ը այն դուժարի, որ ստացւում է մի հեկտար խաղողից կամ պտուղից: Բայց և այնպէս, Վրաստանի Խորհրդային կառավարութիւնը որոշում է Գորիի հող վրա ցանել ճակընդեղ ու շինել շաքարի գործարան: Ինչո՞ւ: Միայն նրա համար, որ շաքարի գործարանը հիմնի Վրաստանում և ոչ Հայաստանում:

Այդպէս էլ եղաւ. մինչ Հայաստանի կոմունիստները շարժւում էին, վրացի կոմունիստները յաջողեցին ստանալ Մոսկուայի հաւատութիւնն ու դրամը, և Գորիի մօտ սկսեց շինել շաքարի գործարան: Եւ հազիւ գործարանի պատեր սկսել էին բարձրանալ, վրացի կոմունիստները սկսեցին լուրեր տարածել, թէ՛ գործարանի պահանջի չափով հող կտրելի չէ յատկացնել ճակընդեղ մշակելու համար, ուստի հարկաւոր է ուրիշ տեղից ճակընդեղ բերել: Լուրերին յաջորդեց և գործնական առաջարկը. Հայաստանում գործարան չէինել և Երևակի ճակընդեղը փոխարէն Գորի՝ Վրաստանի գործարանում շաքար պատրաստելու համար: Ի՞նչ փոյթ թէ Երևակից Գորի հեռավորութիւնը 200 կլիւմետր է:

Եւ այսքանը դեռ բաւական չէ: Վրաստանի պահանջարկի մաս ժողովրդական գործավարութիւնը մի յատուկ յանձնաժողով բերել տուց Մոսկուայից՝ պահանջելով վրացական երկրորդ շաքարի գործարանի տեղի որոշումը Մամգորի հովտի օտոզուղ հողերի վրա: Մամգորիի հողերը նոյնպէս ապիւս են առաջնակարգ պտուղների, խաղող և նոյն իսկ բամբակ ու ծխախոտ, որոնք

* Այս յօդուածի հեղինակը Խորհրդ. Միութեան ակումբներից նոր դուրս եկած մի ինժեներ է, որ երկար տարիներ աշխատել է Անդրկովկասում և մտօնք ծագեց խորհրդային տնտեսական պայմաններին և կոմունիստական կարգերին ու բարեփոխել: Նրա հաղորդած փաստերը արժէքաւոր են հէնց Ռուսիայ, որ նա ակնմատես կամ ակննջալուր է եղել իր գրածներին և տեղեակ է մտօնք խորհրդային Ոգիւմպասում անցած դարձմաներին: ԽՄԲ.

300% աւելի բերք են բերում քան ճակնդեղը, բայց և այնպէս որոշում է այդ հողերի վրա չինել շաքարի գործարան: Տարածութիւնը Սամգորիից Գորի ընդամենը 45 կիլոմետր է և եթէ պէտք է բամբակի ու խաղողի փորձարէն ճակնդեղ ցանել, բերքը կարելի է հեղուութեամբ հասցնել Գորիի գործարանը, ուր հում նիւթի պակասութիւն է գրացում: Բայց և այնպէս Վրաստանի կոմունիստները որոշում են Գորիի գործարանի համար 200 կիլոմետր հեռու գտնուող Ծիրակից բերել ճակնդեղ, իսկ Սամգորիում չինել նոր գործարան:

Այս ձեռք չայտանալի Ծիրակի շրջանը, ուր միայն ճակնդեղը կարող է շահաւէտ առդիւնք առլ, զբրհուում է շաքարի գործարանից, իսկ Գորիում, ուր հողը անձեռնառու է ճակնդեղի յատկացնելու, նկրտեմբերին գործի է դրելու գործարանը, առանց հում նիւթով ապահովւած լինելու:

Բնորոշ է և հայ ու վրացի կոմունիստների գործելակերպը: Մինչ երեւանում հազիւ կարողանում են 2000 բուրլի ճարել գործարանի նախապատրաստական աշխատանքների համար, վրացիներն ամիմպպէս յատկացնում են 45-000 բուրլի. 45-000 բուրլի էլ քիչ յետոյ պահանջում ու ստանում են Մոսկվայից, Սախարթրվայից: Երկրակի փորձերը կատարում են գաւառական մի անփորձ գիւղատնտեսի կողմից, ազատ ժամերին, իսկ Գորիում աշխատում է Մոսկվայից ուղարկւած յատուկ մի մասնագէտ՝ ամէն տեսակ նիւթական յարմարութիւններով: Որպէսզի վրացի գիւղացիները համաձայնեն բարձրորակ բոյքերի փոխարէն ճակնդեղ ցանել, Վրաստանի կառավարութիւնը գիւղացիներին նպաստ է տալիս և դրամով պարտադրում ճակնդեղ ցանել: Երկրպետը ցանքը կատարում է նախնական միջոցներով և միայն գիւղացիների ձեռքով, Գորիում՝ կատարելագործւած մեքենաներով և առանկակարգ սերմով: Սակայն և այնպէս, Երեւակի բերքը և՛ որսակով, և՛ քանակով աւելի լաւ զուրա կեաւ, քան Գորիինը: Եւ միայն կիզմէջի ու խարդախութեան միջոցով Թիֆլիսին յանդուցեց ապահովել Գորիի գործարանի շինութիւնը, իսկ Երեւակից՝ թողնել ծոպադակին: Հոկտեմբերից Վրաստանը պիտի արտադրէ սեփական շաքար, նոյն իսկ Հայաստանի գիւղացիների ճակնդեղով, իսկ Հայաստանը զրկւում է շաքարի գործարանից:

Հետաքրքրական է արձանագրել և վրաց բոլշեիկներին ու մենշեիկներին գործակցութիւնը ազգային-արեւտեսական ինչդիրներում: Գորիի շաքարի գործարանի հայրը մենշեիկ Գոտուան է, Վրաստանի խորհրդարանի այն նշանաւոր պատգամաւորը, որ երբ վրաց կառավարութիւնը պահանջեց 300,000ր. Թիֆլիսում ապրող ուսանողներին հետացնելու համար, տեղից վեր կացաւ և առաջարկեց յատկացնել 3,000,000ր. միայն թէ ըլլոր ոչ-վրացիները հեռացին Թիֆլիսից: Գոտուան ի նկատում ունէր, ի հարկի, Հայերին: Անց այս մարդն է շաքարի գործարանի տնտեսական և տեքնիկ հիմքերի կազմողը: Իսկ գործարանի մայրն է և Գոտուայի մտերիմ գործակցող Վրաստանի կառավարութեան այն ժամանակայ նախագահ ծանօթ՝ ազգայնական-կոմունիստ Կարտիկաշվիլին, որ անձամբ հետևում էր շաքարի գործարանի բոլոր գործերին:

Այսպէս թէ՛ այնպէս, չնորհու հայ կոմունիստների բացերեանութեան և վրացի կոմունիստների ճարպիկութեան Վրաստանն այսօր տէր է շաքարի գործարանի, երկրորդը հիմքն էլ շուտով կը դառնի, իսկ Հայաստանը: Հայաստանի գիւղացին հում նիւթ պիտի հասցնէ Վրաստանի գործարանին...

II

ԲԱՋԱԼՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

10-12 տարի առաջ Ծրանայում կարողացան դնել բազալտը երկխորականութեամբ հայցնելու միջոցը:

Հայրած բազալտը գործ է ածւում ջիմիայէս դիմացուում ամաններ, երկխորական բարձր ռոտանքի համար անհատիչներ, անթիլ հեռագրի սիւներ անջատող բարձիկներ և այլ կարգի թանգարթէջ իրերի պատրաստութեան համար: Հայած բազալտի արդիւնաբերութիւնը իրստ շահաւէտ տնտեսական գործ է և կարող է յաջողիլ այն վայրերում, ուր կայ առատ և աժան երկխորական ոյծ:

Հայաստանը, ինչպէս յայտնի է, հարուստ է բազալտ քարի անսպառ պաշարով և ջրա-երկխորական աժան ուժով: Եւ քնական է, որ Հայաստանի Ժողովուրդը հետաքրքրեց տնտեսութեան այս ճիւղով և ջրանց Ծրանայից ստանալ բազալտը հարելու միջոցը: Չկարողանալով համաձայնութեան գալ Փրանսայի հնարիչի հետ՝ Հայտողտնտիրը յանձնարարեց Հայաստանի համալսարանի ուսուցչապետները Ղարաբաղեանի և Ռոտինեանի՝ գտնել բազալտի հայման սեփական միջոցը: 4-5 տարւայ յամառ աշխատանքն ու 150,000ր. ծախսը պահպեց յաջողութեամբ. Ղարաբաղեանն ու Ռոտինեանը գտան բազալտը հարելու միջոցը: Որից յետոյ, հերթի դրեց Հայաստանում բազալտի գործարան հիմնելու ծրագիրը:

Բայց Թիֆլիսի Գոտուաները քնած չէին: Հէկց որ վրացի կոմունիստներն առին Հայաստանի գործարանի ծրագրի լուրը, իսկայն անցան գործի: Գոտուան մի վրացի ինժիների հետ ձեռնարկեց Վրաստանում բազալտի գործարան շինելու ծրագրին: Բազալտը հարելու միջոցը մտածոււմ են ստանալ Հայաստանից հիւսիսարգապահութեան կազմով: Եւ, ի հարկի, կը յաջողին: Չպիտի գարմանաք, եթէ վաղը իմանաք, որ բազալտի գործարանը որոշում է կառուցանել Վրաստանում, իսկ Հայաստանի ծրագիրը դրւած է Երեւակի շաքարի գործարանի կամ Երեւան-Աղստաֆա երկաթուղու կողքին:

Եւ այդ այն ժամանակ, երբ Կովկասի ոչ մի երկրում բազալտ քարը այնքան առատ չէ, որքան Հայաստանում: Նոյնպէս, Հայաստանի երկխորական ոյծը աւելի աժան է քան Վրաստանում: Բոլոր նկատուները և, առաջին հերթին, տնտեսական շահը խոսում է յօգուտ Հայաստանի, բայց և այնպէս Վրաստանի պետական մարմինները զբաղւած են բազալտի գործարանը Վրաստանում հիմնելու ծրագրով:

III

ԱՊԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Պէմզան (չեչաքար), որ մի ժամանակ գործ էր ածւում միայն մեքենաների մասերը յղէկու համար, այժմ լայնօրէն և մեծ շահով կիրառւում է ապակու և շինարարական արդիւնաբերութեան մէջ: Պէմզան մենշեիկն առաջում էր ղլխաւորապէս Իտալիայից (Սիլիկիա), որտեղից արտահանւում էր Եւրոպայ ու Ամերիկա: Ռոբէրտ. Միւսթեան երկրորդից միայն Հայաստանն ունի պէմզա և այն էլ այնպիսի մեծ քանակութեամբ, որ աշխարհի ոչ մի երկիր չի կարող մրցել նրա հետ: Հայաստանի պէմզայի մէկ առաւելութիւնն էլ այն է, որ նա ունի այլաբան դոյնք և ջիմիական տարբեր բազալտութիւն: Հայաստանի պէմզայի պաշարի ամբողջ քանակը դեռ պարզւած չէ. դիտական ամէն արշաւ յայտնաբերում է նորանոր աղբիւրներ:

Իր ջիմիական կազմով պէմզան փրփրաւաւ վիճակում ստաւձ ապակու է: Իտալիայի ապակու գործարաններում պէմզան հարւում է երկխորականութեամբ, որով նոյնպէս հարուստ է Հայաստանը:

Իհու 1927թ. Հայաստանի Ժողովուրդը ծրագրել էր հիմնել ապակու գործարան: Ամէն ինչ խօսում էր յօգուտ ծրագրի յաջողութեան. առատ և ընտիր նախանիւթ, աժան երկխորական ոյծ, ապակու մեծ պահանջ: Պէմզայի զանազան տեսակները հնարաւորութիւն

էին տայիս պարտաստիւ շինարարական ապակի՝ պատուհաններէ և դռներէ համար, հայկիներ, բայ շէշեր (կոնսակի համար), կանաչ շէշեր դինու, գարեջրի, հանքային և այլ ջրերի համար, դեղագործական բաղմադոյն սրակներ և այլ տեսակ ամանեղէն: Պէճգայի օրինակներն ուղարկելի էին Ռուսաստանի մի շարք յարարատրիաներ ու ապակու գործարաններ: Արդիւնքն ստացել չհիանալի, աւելի փայլուն, քան իտալական ու դերմանական պէճգան:

Ապակու գործարանի ինդիւրը, 1928թ. սկսած, անվերջ յուշում է Հայաստանի պետական հիմնարկութիւնների մէջ: Անդրկովկասի Ժողովուրդն էլ խոստանում է որոշ աջակցութիւն: 1931թ. Մոսկւայից եկաւ մասնագիտական յատուկ մի յանձնաժողովը ապակու գործարանի տեղը որոշելու համար: Այդ առթիւ Քիմֆիլիտսով հրահրելից յատուկ մի խորհրդակցութիւն հանրապետական ներկայացուցիչներ մասնակցութեամբ: Մոսկւայի ներկայացուցիչը, մի հեղինակաւոր ուսուցչապետ, դեկտեմբեր կատարած հետազոտութիւնները արդիւնք, ըստ որի յանձնախումբը աւելորդ էր համարել Հայաստան պէճգան, որովհետեւ Հայաստանի պէճգայի քանակի ու որակի մասին գոյուցիւն ունէր լրիւ տեղեկութիւն. նոր հետազոտութիւնների կարիք չկար: Հայաստանը պէճգայի անսպառ հանք է: Վրաստանում կայ Սուրամի աւազանները, որից շինւած շէշերը, սակայն, ստացում են սեւ գոյնի և անպէտք են գործածութեան համար: Հանք էլ պէտք ունի նախնական մշակութեամբ: Քուրթայի շրջանում էլ կայ աւազաններ, որ կարող է բաւարարել 25 տարւայ համար: Ազրբէյջանը ձեռնուող է ապակու գործարանի համար, որովհետեւ հում նիւթ կայ միայն Բագուում և այն կարող է պահանջել նաեւ Քարդինաբերութեան համար:

Մասնագիտական գեկուցման ներկայացութիւնը ամէն տեսակետից խօսում էր յօգուտ Հայաստանի, բայց Անդրկովկասի Ժողովուրդն որոշեց գործարանը շինել... Քուրթայիում և այդ նպատակին յատկացնել 10 միլիոն ռուբլի: Որոշումը պատճառարանում էր նրանով, որ Ռուսաստանի յարաբարութիւններում և գործարաններում պէճգայի շարժուող փորձերը կատարել են նաեւ ու քարածուխի վառելիքով, իսկ Հայաստանում երկարում են հալել երկրորդականութեամբ, միջոցաւ, իբր թէ, երկրորդականութեամբ հալելու ձեւը յայտնի չէ Ռորհրդ. Միութեան սահմաններում:

Հիմա, եթէ կարելի լինի Իտալիայից ձեռք բերել պէճգան երկարականութեամբ հալելու միջոցը, գրեցէ, յաջողի ապակու գործարանը շինել Հայաստանում: Թո՞ղ արտասահմանի հայ մասնագէտները գրազեն այս հարցով*):

IV

ՍԵՒԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Մօտ ձեռնուող տարի առաջ, ցարական կառավարութեան օրով, անգլիացի ինժեներ Ստիւարտը շրքել էր Սեւանի ջուրը Գանձակի և Քիմֆիլի կարիքների ծառայեցնելու ծրագիրը: Պատերազմը արգելեց եղաւ այդ ծրագրի իրագործման, բայց հիմա, տարբեր ձեւով, բոլշևիկներն են առաջ ջուրով Ստիւարտի գաղափարը: Սեւանի խնդրի շուրջ այժմ կրեբեր բուսական յարած են: Հայաստանի անտեսութեան նախանձանխիղի

մարդիկ պաշտպանում են Սեւանի ջուրը Հայաստանին թողնելու միտքը, Քիմֆիլիս ու Մոսկւան ուզում են օգտագործել համամիութենական պահանջների համար: Այսպէս, Անդրկովկասի բամբակի կոմիտէի նախագահ Տոյստպետաւորը առաջարկում է անմիջապէս Սեւանի ջուրը, Չանգուի միջոցով, բայց թողնել Արաքս գետը և գործածել Այրբէյջանի բամբակի դաշտերի ոռոգման վրա: Այս ծրագրի իրագործման գէշընում, մասնագէտների հաշուով, Հայաստանը, առաջին հնգամեակում, միայն երկարական ոյժի 30 միլիոն դոլարի կորուստ կունենայ:

Տոյստպետաւորի ծրագիրը գիմադրութեան հանդիպեց ո՛չ միայն Հայաստանում, այլ և խորհրդային տնտեսութեան նախանձանխիղի մի շարք հիմնարկութիւնների և անհատների կողմից: Այս վերջիններից պահանջում են, որ Սեւանի ջուրը օգտագործուի թէ՛ ոռոգման և թէ՛ երկրորդականութեան համար: Անվը ջուրը ծրագրով ենթադրում է Չանգու գետի վրա շինել վեց խոշոր երկկտրակայան, որից օգտագործւած ջուրը կերթայ Սարգարապատի և Մուղանի դաշտերի ոռոգման:

Տոյստպետաւորը տեղի տալով հանրային կարծիքի բողոքի առջև՝ այժմ հետապնդում է մի ծրագիրը, որ, ըստ էութեան, իր առաջալի մտքի իրականացումն է գարտուղի ճանապարհներից: Նա առաջարկում է 6 երկկտրակայանի փոխարէն շինել միայն մէկ երկկտրակայան և ջուրը անմիջապէս թողնել Արաքսի մէջ Մուղանի բամբակաշուշուրի վրայ: Այս ձեւով, Հայաստանի կորուստը դարձնալ կը լինի շատ խոշոր՝ մօտ 25 միլիոն դոլար առաջին հնգամեակում: Տոյստպետաւորը առարկում է, թէ այդ վնասը գիմաց Ազրբէյջանի բամբակի դաշտերը աւելի մեծ շահ կապահովեն խորհրդային տնտեսութեան: Հայաստանի շահերը պաշտպանողները որակում են որպէս նեղ-ազգայնականներ, համամիութենական շահերը տեղական մանր հաշիւներին գոհաւորելու, «աջ-օպորտունիստներ», «ուկրնիստներ» և այլն:

Պարզ է, որ Սեւանի խնդրի շուրջ իբրք են բախել ազգային ինքնօրոյնութեան և գիմադրել միջազգայնութեան հակադրութիւնները, որոնք բարկանում են, մանաւանդ, Անդրկովկասի ազգային դիրքաբարձր կրեբերով հարուստ միջավայրում: Բոլշևիկեան տեսակետով Տոյստպետաւորը, ի հարկէ, հետևողական է խորհրդային գործարաններին հարկաւոր է բամբակաւորութեան բամբակ կարելի է ստանալ Մուղանի ու Միլի դաշտերից, եթէ ջուր լինի: Ջուր կայ Սեւանում, ուրեմն, պէտք է առնել այդ ջուրը և խորհրդային գործարաններին հասցնել բամբակ: Իրանից կը վառուի Հայաստանը, բայց Հայաստանը մասնաւոր շահ չունի. Հայաստանի շահը Ռորհրդ. Միութեան շահն է: Սարգարապատի դա՛շտը կը մնայ չռոգւած. է՛հ, ինչ արած. Մուղանի դաշտն ոռոգումը աւելի կարեւոր է: Կը տուժեն Հայ գաղթականները. բայց կօզուի խորհրդային անտեսութիւնը:

Այս տեսակէտից բոլշևիկեան տրամաբանութեան կարելի չէ առարկել: Առարկողներն անխուսափելիօրէն կը լինին ճաղգայնականները, տեղական գանդակատուներ Ռորհրդ. Միութեան «մեծ շինարարութիւնից» աւելի բարձր համարողներ: Հայաստանին ներքուստ մարդիկ, սակայն, այդ արակուճներից շղէտք է վախենան: Սեւանի խնդրում նրաքը պէտք է պաշտպանեն հետևեալ կերպ հիմնական պահանջը.

ա) Սեւան-Չանգու վեց երկկտրակայանները պէ՛տք է շինել միաժամանակ և Սեւանի ջուրը նախ պէտք է օգտագործուի այդ երկկտրակայանների կարիքներին:

բ) Երկկտրակայաններից դուրս եկած ջուրը պէտք է ծառայեցի յօշուտ Հայաստանի հողերի (Սարգարապատ և այլն) ոռոգման:

ԱՄՆԻԻ

*) Հագիլ քէ ապակու գործարանի շինութիւնը Քուրթայիայից փոխադրելի Հայաստան: Խնդիրը հո միայն տե՛հնիկ պայմաններից կայաւած է՞. Քիմֆիլի ազում է. որ ապակու գործարանը շինի Վրաստանում — վերջապէս գիտցի: Ջարմանալի չի լինի, եթէ վաղը Հայաստանի պէճգան էլ ուղարկվեն Քուրթայիս, ինչպէս Թակրէ-պեղը՝ Գորիի:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏՐԱՊԱՅՔԱՐԸ

Չորս տարին անգամ մը Միացեալ Նահանգներու Ժողովուրդը, ղեկավարութեամբ իր քաղաքական կուսակցութիւններուն, կիկնէ ընտրական մեծ պայքարի մը կրկնը, ճշտորոշելու համար թէ ո՞րոնք պիտի կուլին վարելու Դաշնակցային ու Նահանգային իշխանութիւններու ղեկը և ի՞նչ սկզբունքներու կամ տեսակէտներու իրականացումին պիտի ձգտին պետութեան գործոն ուժերը:

Այս ընտրապայքարը, որ կը փոթորիչ Ժողովրդական ամէն խաւ, որ կը թափանցէ երկրին ամենէն խուլ անկիւններն անդամ, որ հրապարակ կը քաշէ հասարակական ամէն հոսանք ու հաստատութիւն և իր շնեղալից հեղեղին մէջ կը կանէ երկրին քաղաքական բոլոր տարրերն ու միլիոնաւոր անհատ բոլորիսիւնները, կը սկսի ձևաորոշիլ ամբան ամիսներու, և մինչև Նոյեմբերի առաջին երեքշաբթի օրը, — էր տեղի կունենան ընտրութիւնները — կը հասնի իր ուժգնութեան գերագոյն աստիճանին: Այս պայքարին ի սպաս կը դըրուին միլիոնաւոր տղարներ. անասման հրապարակագրութիւն մատուցի մէջ, անվերջ ճառեր ու հաւաքոյթիւններ: Գաղաքագէտներ, մաստրական առաջնորդող գէմբեր, պետական կամ կուսակցական բարձրաստիճան անձնաւորութիւններ կուզան հրապարակ իրենց խօսքը ըսելու: Կողմադրածի Ժողովրդական լայն խաւերուն լայն լիւրճանալու ամէն միջոց՝ Հետախօս, թերթ, յայտարարութիւն, ծանուցում, բառիօ. կը շալլուին մեծամեծ խոստումներ, կը թելադրուին իրականանալի կամ անիրականանալի յոյսեր: Կարճ՝ կը սարքուի համատարած քաղաքական բեմ մը, որուն մէջ Ժողովուրդը ինքը կը հրաւիրուի և կը պատրաստի խաղալու վճռական դերը: Բոլորը ոչ միայն ակնանտես են, այլ միաժամանակ մասնակից ղերակատար: Կը տիրէ քաղաքական յարամ միճակ:

Այս տարւայ պայքարը արդէն մտած է իր սովորական հունին մէջ: Ծշուած են դիրքերը. նշանակած են թեկնածուները, մշակած պատճիորմները: Ինչպէս Ժողովրդապետական բոլոր երկիրներու, նոյնպէս Մ. Նահանգներու մէջ ընտրապայքարի զխաւոր ղերակատարներն են քաղաքական կուսակցութիւնները, անոնց ընտրած կամ նշանակած թեկնածու անձերը և օրակային հրատակ հարցերը, — ընկերային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական — որոնց գոհացուցիչ լուծումը կառավարչի իւրաքանչիւր կուսակցութեան մշակած ու հրապարակ դրած պատճիորմին մէջ:

Ամերիկեան Հանրապետութիւնը, սկիզբէն ի վեր, ղեկավարած և իր քաղաքական կեանքը արտայայտած է գլխաւորաբար երկու՝ Դեմոկրատ և Հանրապետական կուսակցութիւններու միջոցով: Այս երկու կազմակերպւած ուժերն են, որ ատեն տան անդամ են իշխանութեան գլուխ և ընթացք տած պետութեան գործերուն, ըստ իրենց ըմբռնումներուն և կուսակցական տեսակէտներուն: Միւս բոլոր հոսանքներն ու հաստատութիւնները — Աշխատաւորականներ, Ընկերավարականներ, Գիւղացական հատուկներ, Արդիականներ, Կամուրջատներ, Կանանց կազմակերպութիւններ, մաստրական խաւեր և այլն — կազմակերպուած չեն ղերակատարած ևն, կամ թաւայած են վերի երկու մեծ կուսակցութիւններու անիւին շուրջ:

Այս անգամ ես կրկնեմ մէջ դէմ դէմին են Դեմոկրատներն ու Հանրապետականները: Երբորք կուսակցութիւն մը կազմելու կամ երկրին բոլոր դժգոհ կամ առաջադիմական տարրերը մէկ նոր հոսանքի մէջ խտա-

ցնելով՝ հրապարակ քաշելու ջանքերը ապարդիւն են անցած: Երկու հակադիր կուսակցութիւններու վրա խարսխող կառավարական դարաւոր դրութիւնը (Party Government) այս տարի եւս նոյնքան ամուր նստած է որքան միշտ: Տնտեսական աննախընթաց տաղանայը, երբ օտո 10 միլիոն մարդիկ օրակ հացի կարօտ՝ կը թափառին փողոցները անախատ, ոչինչով չէ փոխած քաղաքական-կուսակցական նախկին փոխարարներու թիւները և ոչ մէկ նոր կարմակերպւած ոյժ կամ հոսանք չէ բերած հրապարակ: Մարդիկ, զերաւելող և տիրական մեծամասնութեամբ, դարձեալ երկրին փրկութիւնը և բարգաւաճ կեանքի վերադարձը կը սպասեն նոյն երկու մեծ կուսակցութիւններէն:

Երկուքն ալ բուրժուական-պահպանողական կուսակցութիւններ են, աւանդապաշտ, տիրող կարգերու պահպանման մոլեռնագործին պաշտպան: Սկզբունքային գետնի վրա զրեթէ տարբերութիւններ չկան երկուքին միջև: Երուորական երկիրներու մէջ կեանքի իջնող և գործող կուսակցութիւններու նման կանխօրոք մշակւած ծրագիրներ, անդամներ և այլ նման դրութիւններ չունին արդէն: Երբ մին իշխանութեան վրա է, միւր ինքնարբարար կամ մեքենակատարներ կը մտնէ ընդդիմադիր դերին մէջ: Կառավարական իր կեանքի տիրաջողը կը վարէ իշխանութիւնը, իսկ միւրը իր պայքարը կը տանի օրէնսդրական դահլիճներէն ներս: Եւ այս եղանակով կը հաւատարակուուի կամ կը զսպուի իշխանութիւնը շարաշահելու ունէ փորձ տիրող կուսակցութեան կողմէ:

Եթէ կայ անշնչա տարբերութիւն մը երկու կուսակցութիւններու միջև, այդ ալ երկու պայքարող կողմերու ղեկավարներու մտայնութեան մէջ է զըլխաւորաբար: Դեմոկրատները ճանչցւած են որպէս աւելի առաջադէմ, ազատական տարրերու արտայայտիչ, խոնարհ խաւերու պաշտպան, մեծ Ֆիւնանսի և արդիւնաբերութեան շարիքները զսպող. Իսկ Հանրապետականները՝ հարուստի կուսակցութիւն, յայտատարութիւնը ճնշող, ազատական-առաջադիմական սկզբունքներ է և առաջադրութիւններէ խրոչող, միջադպային կեանքի երևոյթներուն թիկունք դարձնող, նեղ ազգայնական, և երկիրը «լիցենսիտ կղզիացման» մէջ պահելու նախանձանիւղի:

Այս ջրէ մը հասարակ տեղիքը բնորոշումը երկու կուսակցութիւններու մասին այնքան ալ ճիշտ չէ, մասնաւոր այսօր, մեծ պատերազմի ետք, երբ կեանքի արագ թափը և աշխարհի տնտեսական ներկայ յարաբերութիւնները խորապէս փոխած են երկու կուսակցութիւններու ալ մտայնականը, և դեմոկրատներու ու հանրապետականներու միջև գոյութեան ունեցող անշնչան տարբերութիւնները զրեթէ անհետացուցած: Երկուքն ալ այսօր ունին իրենց մէջ թաղմաթիւ հարուստներ, արդիւնաբերողներ, տնտեսական-ֆինանսական իշխաններ, մտաւորական դէմքեր: Երկուքն ալ քաղկացուցիչ խաւերուն որակը զրեթէ համաման է: Եւ այն աւանդական լմբռնումը, թէ Հանրապետականներն են ղեկավարող գործառնող, հարուստ խաւերու կուսակցութիւն, բարեկեցութիւն կը սփռեն երբ իշխանութեան վրա են, կամ, ընդհակառակը, Դեմոկրատներու իրապետութեամբ ստանալու ու թշուառութիւն կը ստեղծուի, այսօր արդէն մասնակի ճշմարտութիւն իսկ ըլլալէ դարձած է: Եւրկայ տաղանայը, հանրապետական Հովարդի օրով, մոռցնել տաւած է հանրապետական Բուլիւններու շրջանին Ամերիկայի վայելած համատա-

րած բարեկեցութիւնը: Եւ եթէ խկապէս այդ աննախնայ զարգացմանը ու վայելիչ համասփիւռ բարեկեցութեանը հր ընդին Հանրապետականներու վարած ներքին ու արտաքին քաղաքականութիւնէն, հապա ինչպէս կըար եր նոյն կուսակցութեան տիրապետութեան ամենէն զորեղ շրջանին վրա կեան պիտեման նոյնպէս աննախնայ քաղաքացիականութեանը, թշուառութիւնը ու անգործութիւնը: Ընթացողութիւնը այն է, որ յետագայում ծախսը 8-10 տարիներու ճոխութիւնը Գուրգենը արտակարգ չնորճին պտուղը չէր, ինչպէս որ այսօրեան անկումն ալ Հուլիսիաներու անչորճութեան հետեւանքը չէ: Այդ երեւոյթի պատճառները շատ աւելի բարդ են, խոր ու բազմակողմանի: Իսկ երկու կուսակցութիւնները և անոնց վարած քաղաքականութիւնները իրատ աննշան չարով անդադարած են այդ երեւոյթի վրա:

Դիմոկրատները շատ հին կուսակցութիւն են, հիմնադրւած 1792 մայիսին, հանրապետական երրորդ նախագահ Թամըս ձե՛վերընի կողմէ: Կուսակցութիւնը կեանքի կոչեցաւ զլիստորաբար պայքարելու այն ժամանակակից տիրող ազնուական դասին՝ Լուիզերու (Whigs) դէմ, և առաջ քաշելու ժողովրդական աւելի խոնարհ խաւերը կամ աւելի լայն կերպով գոհացում տալու անոնց պահանջներուն, թէ և ձե՛վերընի հետեւորդներն ու գործակիցները իրենք ալ իրենց ընկերային դիրքով արհեստակներ էին և բաւական երկար ժամանակ մնացին որդէս ազգային, երբ աստիճանաբար առաջադիմակէտ մտածումներ ու զարգափարներ ներթափանցեցին կուսակցութեան մէջ, զարգացուցին ազգայինական ուղղութիւն և մտայնութիւն գործնականը ու ընթացումներու մէջ և աւելի կուսակցութեան ժողովրդայնացումովան հասանքի կնիք: 1800ին ինքու ձե՛վերընն այս կուսակցութեան ուժով ընտրեցաւ նախագահ Հանրապետութեան: Եւ այնուհետև 30 տարի շարունակ իշխանութիւնը մնաց անփոփոխ ստանդ ձեռքը:

Նախապէս՝ իր հիմնադրութեան շրջանին կուսակցութիւնը կը կոչուէր «Հանրապետական» կուսակցութիւն: 19րդ դարու առաջին բարձրին տիրական մնաց ձե՛վերընի ազդեցութիւնը: Կուսակցութիւնը տաւ մեծ դէմքեր Հանրապետութեան, ինչպէս ձե՛յնս Մօնթո և մանաւանդ Էնտու ձե՛յնս (1824 և 1828ին նախագահ), որուն օրով պետութիւնը գրեցեալ իսկական ժողովրդապետական կարգերու վրա, վերջեցեան շարք մը առանձնաշնորհումներ բարձր խաւերէ, ժողովուրդը դարձաւ տէրն ու անողորմելի փարչի իշխանութեան և նահանգներու վեհապետական իրաւունքները ճշտեցան ու պաշտպանեցան: Կուսակցութիւնն ալ, ըստ տիրող մտայնութեան և ծաւալող առաջադէմ զարգափարներուն, իր անունը փոխեց և կոչեցաւ «Էրեմոկրատական» կուսակցութիւն, 1828ին: 1840էն մինչև 1860 երկրին ղեկը վարեցին փոխին ի փոխ Դիմոկրատներն ու Լուիզերուի 1860ին ետք սխաւ խաւարիլ այս մեծ կուսակցութեան աստղը, թէ և միշտ ալ գործած աղպակ հանդիսանալէ ու պակասուելի ոյժ ըլլալէ երբեք չզարգացաւ:

1860ական թւականներուն և այնուհետեւ քառորդ դար, զլիստորաբար հարստային նահանգներու ճշտումն ու կուսակցութեան ծոցին մէջ իրենց գրաւած գերիշխող դիրքին պատճառով, Դիմոկրատները ընդդէմացան սեւանթիւնը պատագրման և դերեմատնութեան ջիւղման: 1860էն մինչև 1932, մօտ երեք քառորդ դարու ընթացքին, յաճախ պարտեցան և յաջողեցան միայն երկու նախագահներ ընտրել, Կորոլը Բլիվինտոն (1884 և 1892) և Ուորտ Ուիլքինս (1912-1920): Այս վերջինի օրով Մ. Նահանգները ներքին աջաբառու բարեկարգութիւններու ենթարկեցան, ինչպէս նաև մասնակցեցան Համաշխարհային պատերազմին:

Հանրապետական կուսակցութիւնը Համեմատաբար աւելի զուտուր կազմակերպութիւն է, հիմնադրւած 1834ին: Ա. Լինքոլն, նոր աշխարհի մեծագոյն պետական դէմքը

պատմութեան մէջ, ընտրեցաւ նախագահ՝ իրր ղեկավարը այս կուսակցութեան 1860ին, պատագրեց սեւանթիւնները, մղեց քաղաքացիական յաջող ու յաջեփական պատերազմ հարստային ըմբոստ նահանգներու դէմ՝ վերկերու երկիրը հաստատակաւնութեան և մի անգամ ընդմիջտ պահանգներ Մ. Նահանգներու միասնականութիւնը: Լինքոլնի քաղաքականութեան Հիմնաքարն էր Մ. Նահանգներու միասնականութեան պահպանումը: Միև ժամ ըտրը ինչպիսիքը՝ սեւանթիւններու ազատագրում և այլն, կողմնակի նշանակութիւն ունէին: Լուիզները միացան նորակազմ կուսակցութեան 1860ին ընտրապայքարին:

Եւ այնուհետև «դերթէ շարունակ միահեծանորէն իշխեց այս կուսակցութիւնը նոր աշխարհի ճակատագրին վրա: Այս կուսակցութիւնը յամտու ու անտէրիտալի կերպով կանգնեցաւ և մինչև այժմ ալ կանգնած է զազգայնութիւն հաստատականութեան ու միջադաշնութեան դէմ» և «պաշտպանողական մարտային քաղաքականութիւն» սկզբունքներուն վրա: Իրենց ուղղակի կամ անուղղակի ջանքերով ինչեպան առաջին մեծ երկաթուղայինը ուղկիանոսէ ուկիանոս և Բանտային ջրանցքը: Ասոնք էին որ ձեռք ձգեցին Մ. Նահանգներու դրսի ստացւածները՝ Ֆրիլանկ կղզիները, Բօրթո Ռիօ, Գուայ, Կուամ, Հիլալի, և այլն: Նախագահ Մքքլինլի օրով էր որ մղեցաւ պայանամերիկեան պատերազմը, որմէ դուրս եկաւ երկիրը յաղթական:

Իարձեալ հարաբախտական կուսակցութիւնն էր, որ յաւերժացուց, և այսօր ալ ամբողջ կը շատագոյնէ «Արեւելքի մէջ ազատ դուռ»ի և ներքին կեանքի մէջ «Ֆիլանտական կալուածութեան» քաղաքականութիւնները: Իրենց ղեկավար օր. Կրեյտն էր, որ, 1868ին հազրու նախագահ ընտրւած, որեպէրեց հարստայիններու հետ հաշտ ու անիշխար կենդանի ստեղծելու և քաղաքացիական պատերազմի վէրքերը դարձանելու կամ ցաւը մտցնել տալու առողջ քաղաքականութիւնը, որ յաջողութեամբ պատկեցաւ: Նոյնպէս յաջողութեամբ պատկեցաւ իրենց բուռն պայքարը Դիմոկրատներու դէմ 19րդ դարու վերջերը, երբ որդեգրեցին ռակիտարալի քաղաքականութիւնը և արձագոք վանեցին հրապարակէն իրը հիմնադրած: Իսկ նոր դարու սկիզբին յաջողեցան տալ երկրին Ռուզվելթի նման ժողովրդական պաշտամունք վայելող առաջնորդներ:

Եւ այսօր ահա կուրի մտած են այս երկու արտոյանները, մին տարիբով աւելի հին, բայց իրր աւելի ազատական ու նոր գլուխի տէր, մինչ ժողով աւելի երեստասարդ, բայց իրր աւելի հին գլուխի տէր ու պահպանողական: Պատմութեան գարմանալի կամ միշտը ըմբռնելի զաղտնիքներն էին է թերևս, որ Դիմոկրատական հսկայ կուսակցութեան աստղը խաւարեցնողը, անընդհատ երեք քառորդ դար, հանդիսանայ աւելի ազգայնաողական, նոյնիսկ յետագէմ աւանդալու, նեղ հայեացքի տէր հաստարական հոսանք մը, և հին ժամանակներու Համեմատաբար աւելի մաքերը պարտուին նոր ժամանակներու Համեմատաբար անբրէն:

Այս տարւայ յուսիս ամառն այս երկու կուսակցութիւնները դուամբեցին իրենց համատեղաբար Երեքակոյի մէջ, որ մշակեցին ընտրապայքարի պատաՓորնները և անանեցին իրենց թեկնածուները՝ Մ. Նահանգներու նախագահի ու փոխ-նախագահի պաշտօններուն: Հանրապետականները, հակառակ տիրող ընդհանուր դժգոհութեան իշխանութեան դէմ, գարմանալի կարգապահութեամբ և ներքին ինքնարտու իմաստութեամբ, մէկ մարդու նման կանգնեցան Լուլիսի կողքին և գրեթէ միաձայնութեամբ զայն դարձեալ թեկնածու անանեցին: Իսկ Դիմոկրատները, որոնց մէջ առհասարակ կեդրոնաձիգ տրամադրութիւնները տկար են և կուս կարգապահութիւնը յաճախ կը խախտի, յաջողեցան ըմբռնել նպատաւոր վայրկեանի հրամայականը, մէկ մարդու նման կանգնեցան Նահանգապետ Փրէնքլին Ռուզվելթի շուրջ, որ անանեցաւ նախագահ

հական թեկնածու: Փոփոխադասութեան թեկնածուներու շուրջ պայքարը, ինչպէս միշտ, այս անգամ ալ սերը շէր. և կարիքը ալ շկար ստեր, որովհետեւ Մ. Նահանգներու սահմանադրական օրէնքներով փոխ-նախագահութիւնը, եթէ կուզէք, թէ՛ մը որդերգրական պաշտօն է, քանի որ փոխ-նախագահը պետութեան ղեկավարութեան մէջ ոչ մէկ դեր ունի, այլ պարզապէս կը նախադասէ Ենթարկուի նիւտերուն և կը սպասէ չորս տարի, որպէսզի իր պնդման մեծնի և իրեն պատահութիւն բացի բարձրանալու նախագահական աթոռի վրա:

Ի նշան թղտղութեան կտաւազարէին և ի՛նչ լայն խոստումներ կամ գործունէութեան ուղիգծեր մշակած են այս պայքարող կողմերը:

Հանրապետականները, 1920էն ի վեր տիրացած ըլլալով իշխանութեան, ընդհանարաւ, կը շեշտեն իրենց օրով երկրի վայելած բարիքներուն վրա, կը պնդեն թէ մարդկօրէն բրած են ինչ որ հնարաւոր էր տեսլ պայմաններու մէջ, կը մերժեն մեծ տաղնապի ամէն պատահանաւորութիւն, և բարձրագոյն կը պրտան, թէ Հանրապետութիւնը կրնայ դուրս գալ սահմանադրած աղտէն միմիայն իրենց առաջագրած դեղատիպներուն շնորհիւ: Դեմոկրատները, կը փաստարկեն անոնք, չիսպարական ոչ մէկ ստալագրութիւն չունին, այլ պարզապէս տիրող ծանր կացութիւնը կը փորձեն ծառայեցնել իրենց իշխանասնէ՛ ճշտումներուն: Ատոր հակառակ, Դեմոկրատները խափէ կը քննադատեն Հուլիսի վարչութիւնը իբր ուղղակի պատահանաւորութիւն օրուք ծառայող տաղնապի, միջպարտէ կը յարձարեն Հանրապետականներու «պաշտպանական մարտի» քաղաքականութեան վրա, Արդեւականութեան առաջնորդած շարիքները կը վերագրեն իշխանութեան, և բարձրամայն կողակէն, թէ Հանրապետական կուսակցութիւնը չի կրնար խուսափել անտեսական տաղնապի պատահանաւորութենէն, եթէ իրաւ է որ նախկին բարեկեցութեան պարեկատուները իրենք էին, ինչպէս կը հաւատարմացնէին Բուլիճի և նախքան տաղնապի սկզբնաւորումը Հուլիսի ընտրութեան օրով:

Հանրապետականները հետեւել կերպով խտացուցած են իրենց առաջարկութիւնները:

ա) Ետրունակը պաշտպանողական բարձր մարտի գրութիւնը, մասնաւոր այսուհետեւ երբ շատ պետութիւններ հրճարած են ոսկիի սթանդարտէն: Օտար երկրներու մէջ արդիւնաբերութիւնը, ոսկի ֆոնդի հրճարումով, աւելի ածան պիտի արժէ և ամերիկեան հրապարակը պիտի ուղղի օտար ածան արտարութիւններու, եթէ ազատ աւտուրը թոյլարուի և մարտային բարձր պատնէշներ քանդուին:

բ) Գիւղացիական արտարութիւնները, ինչպէս նաև քարիւղը, պղինձը, ատաղձն ու հանքածուխն ալ ենթարկել պաշտպանողական մարտի: Գիւղացիական հոծ գանգաւաններու բարեկեցութեան ստատիկու ուրիշ ուղիղ ճամբայ չկայ:

գ) Պաշտպանել տուրբը ամէն դեով. պահպանել ոսկիի սթանդարտը: Ի հարկին մասնակցիլ կամ հրաւիրել արժաթի մասին միջադատի խորհրդաժողով:

դ) Պահպանել աշխատավայրերու աշխատանքի օրէրը սակը. կարճեցնել շարժական աշխատանքի օրէրը, ինչպէս նաև կրճատել օրական աշխատանքի ժամերը:

ե) Վերացնել զբամատուներու օրէնարութիւնը՝ առաջըր առնելու համար ժողովրդական պահ արած գումարներու կորստեան: Պահպանել վարկի դուրսութիւն ունեցող գրութիւնը:

զ) Ետրունակը ներդրութի աշխատանքի սեղմ դրութիւնը:

է) Գործակցիլ Արդերու Դաշնակցութեան, ինչպէս եղաւ չին-ճարտնական տաղնապի առնել:

ը) Գործան մասնակցութիւն գինեթափումի ամէն քայլի, հակառակ այն իրողութեան որ Մ. Նահանգներու

րու բանակը արդէն ինչեւած է իր նազարդոյն և անկործանելի չարին:

Թ) Անդամակցել Լահէի Արդարութեան Դատարանին:

Դեմոկրատներու մշակած պատճառի կէտերը կարելի է խտացնել հետեւել կերպով.

ա) Նահանգներուն ընծայիլ դաշնակցային դանձնջ մշակցութիւն, որովպէ հանրային շինարարական ձեռնարկին կատարել և անդործութիւնը նազիլ:

բ) Չննչիլ պետական աւելորդ պաշտօնատուները:

գ) Կրճատել աշխատանքի ժամերը:

դ) Պաշտպանել զբամատուներու մէջ պահ ձգած ժողովրդական գումարները:

ե) Անկատելի իւն տալ Ծիրիբան կողմներուն:

զ) Վերացնել ու դատապարտել աշխատանքի Հօլի-Մոնթի Հրաւիրած բարձր մարտային օրէնարութիւնը:

է) Հրաւիրել միջադատի խորհրդաժողով ամենուրեք ինչեցնելու մարտային պատարները և դարկ տալու միջադատի անտեսութիւն:

ը) Հրաւիրել միջադատի խորհրդաժողով արժաթի մասին:

թ) Անդամակցել Լահէի դատարանին:

ժ) Կրճատել կամ Չննչիլ պատերազմական պարտքերը այն պարտադային, երբ պարտական պետութիւնները կը գինեթափուին:

Ինչպէս կը անննչ, երկու կուսակցութեանց միջև միակ հիմնական տարակարծութիւնը մարտային քաղաքականութեան շուրջ է: Միւս հարցերու հանդէպ երկուցիլ վերաբերումըր էպպիս տարբեր չէ: Ծիրիբան կողմներուն անկախութիւն տալու տեսակէտին, զոր կը նախադրեն Դեմոկրատները, Հանրապետականները սկզբունքով դէմ չեն, այլ պարզապէս վաղաժամ կը նկատեն:

Հանրապետականները վախ կը ներշնչեն, թէ Դեմոկրատներու յաջողումով տուրբը կրնայ անկումի ենթարկիլ, քանի որ անոնք նախանձանկողիբ չեն պետական պիտանէի հաւասարակշռումին և, ընդհակառակը, կոնքրէպի մէջ ամէն ճիգ թափած են, որ պետութիւնը քանի մը միլիոնի պարտաթուղթ հրապարակ զէն կամ նոր գրամաթուղթ չընթանալու մայ: «Առողջ հարձ» (sound money) կամ տուրբի պաշտպան կուսակցութիւն կուսանեն ինչընչեցին:

Հետաքրքրական է ընդդէմ, որ այս ընտրապայքարի մէջ կեղծոնական ազդակ հանդիսացող Արդեւականութեան խնդիրն է: Դեմոկրատները անվարան ու անվերապահ որդերգրած են արդեւականութեան օրէնքի յետադրման տեսակէտը, ինչ որ առանձին խանդավառութիւն և յոյսեր արթնացուցած է ամերիկեան ժողովրդի բոլոր խաւերուն մէջ: Հանրապետականները, որոնց մէջ չոր տրամադրութիւնները աւելի ուժեղ էին (թէ և չոր նահանգները գլխաւորաբար Դեմոկրատական միջնաբերդեր են), որդերգրած են Արդեւականութեան օրէնքի վերացման թէ՛ մը դանդաղ ճամբը: Անոնք դէմ են յետադրումին, այլ կուսակցութեան նահանգներու նկատմամբ ենթարկել հարցը և դաշնակցութեան պաշտպանութիւն ընծայել այն նահանգներուն, որոնք կը նախընտան շարունակել չոր մտալ:

Այստեղ ալ տարակարծութիւնը սկզբունքային և հիմնական չէ, այլ դոյրութիւն ունեցող սահմանադրական օրէնք մը, որ բազմաթիւ շարիքներու աղղիւր է հանդիսացած, վերացնելու կերպին շուրջ է:

Աւելորդ չէ շեշտել նաև, որ ոչ միայն կուսակցութիւնները իրենք, այլ բովանդակ ամերիկեան ժողովուրդը իր բոլոր խաւերը, քաղ թէ չոր, ամենէն եռանդուն կարեւորութիւնը կրճատէ այս խնդրին, և քեւարկուներու շախմատիչ տոկոսը իր դիրքը պիտի ճշտէ թեկնածուներուն հանդէպ նայած թէ ինչ վերաբերումը ունի Արդեւականութեան հանդէպ: Եւ այս այնպիսի առնել մը, երբ երկիրը խրամ է անտեսական վայրէջքի մը առնելի վիճակ մէջ, երբ միլիոնաւոր ան-

ձեր իրենց ընտանիքներով մնացած են աշխատանքի ու հայր կարօտ, երբ ինքը՝ տիրող վարչակարգը կանցնի ստորոց տաղանայէ՛ մը, անհետխնթաց ծաւարով ու տեղափոխեալ, և երբ սպալան և թէ՛ ոչ մտք, զէ՛թ մտայնամած է և հորիզոնի վրա լաւ օրերու վերադարձի ոչ մէկ նշոյլ չերևար: Եւ որքան տաղանայր կը խորանայ ու կը ծանրանայ, այնքան մարդիկ բարձր կը ճշան ձեռք ձգելու աղատօրէն խմելու, աճան խմելու, եակալանքը և ոչ թէ կեղծն ու թունալիցը խմելու իրենց իրաւունքը:

Որ կողմն ալ յաղթէ՛, սակայն, այժմէն վստահաբար կարելի է բռնի, թէ՛ Արդևլականութեան ճարտիւ փորձարկութիւնը՝ իր հողվարքը կապրի և շուտով Մ. Նահանգները պիտի վերադառնան իրենց բնականն յիմնակին՝ բաւականանալով, ի հարկէ, գինետուն կողած զղելի որջերուն խափանմով: Արդևլականութեան վերացումը և ողջից րոնդիլի արդիւնաբերութեան վերահաստատումը պիտի նպաստէ թիւրս նաեւ տաղանայի մեղմացման, քանի որ միլիոնաւոր մարդիկ նոր աշխատանք պիտի կրնան ձարիլ և սրտութիւնը, փորնակն անդործադրելի օրէնք մը պարտադրելու համար տարեկան մօտ 300) միլիոն տոլար ի գուր ծախսելու, աւելի քան կէս միլիար տոլար եկամտաւոր նոր աղբիւր պիտի գտնէ:

Այն հանգամանքը, որ դարաւոր ժամանակաշրջանի մէջ յաճախ պայքարի մտնող այս կուսակցութիւնները էտպէս քիչ տարբեր են իրարմէ՛, ուժեղ մտափիճակ է ստղծած ամերիկեան քաղաքականութեան աւելի շատ ուշադրութեան առնելու կուսակցութիւններու առաջարկած թեկնածուներու անձնական արժանիքները քան անոնց պլանֆորմային առաջարկութիւնները: Ամերիկացիք աւելի շուտ կը սիրէ՛ քաղաքիկ անհատին քան կուսակցութեան, և այս պատճառով ալ յաճախ կը շրջէ իր ձայնը, նայած թէ՛ ո՛վ է թեկնածուն: Զարմանալի չպիտի ըլլայ, որ այս տարի բացմաթիւ առաջադիմական հանրաստեղծանքները բոլորին Ռուզվելթի անւան շուրջ կամ փոխադրաբար բացմաթիւ դիմոկրատ պահպանողականները նախընտրեն ձայն տալ Հուվերին: Կուսակցական չեւտած պատկանելութեան դրուժիւնը դոյուժիկն չունենալով՝ քաղաքիկներու հակայ բացմութիւն մը, 8-10) միլիոն ձայն, կրնայ իր քա՛նք անակրկնաբար շրջել այս կամ այն կողմ:

Թեկնածուներէն Հուվերը նոր դէմք չէ և արդէն իր գործը հրապարակի վրա է, այնպէս որ ամերիկացի քաղաքիկոյին համար դժուար չէ դատաստան կազմել: Վերին ստորինների շրջակայքա, ծանրախոհ, վարչական մեծ ընդունակութիւններով օժտուած անձ է, քիչ մը թիւրս երկչու և անվճռական, ինչ որ ստեղծած է այնպիսի տպաւորութիւն, թէ պետական կամ կուսակցական ղեկավարի տիպ չէ: Իսկ Ռուզվելթ ունի եռանդ, առաջադիմական հակումներ, պայքարող ոգի, աւելի շատ փորձած փոլիթիքիէն է քան պետական մարդ, անձնայայտ դրաւիչ յատկութիւններու տէր, թէև քիչ մը ամբողջատարական հակումներ արտաբերողի յանցանքի մէջ կը մեղադարձի: Այս մեղադրանքը հարկի թէ՛ հիմնաւոր ըլլայ, որովհետև ընդդիմադիրը քնակածօրէն քննադատական վերաբերմունք պիտի յայտնաբերէ և քիչ մը շուայ հետանկարներ ուրաղօժէ, մինչ պետական նաւը ձեռքին սենցոյղ ղեկավարը ինքզինքը պիտի պահէ աւելի գուսայ, աւելի պատասխանատու և նեղ շուայ՝ խոստումներու կամ առաջադրութիւններու մէջ:

Առ այժմ ոչ ոք վստահօրէն կարող է կանխադուշակել ընտրապայքարի ելքը: Մէկ բան որոշ է սակայն, որ Դեմոկրատներու աստղը փայլուն և աւելի քան եր-

անք և մեծ պատենութիւն կայ անոնց առջև տանելու վճռական յաղթանակ Նոյեմբերին: Երբեք անցեալին մէջ (բացի թիւրս 1912ի ընտրապայքարին, երբ Հանրաստեղծական կուսակցութիւնը պատասխան էր, որուն հետեանքով ալ յաղթանակեց ղեմոկրատ Ռուլերը) Դեմոկրատներու յաղթանակի յոյսերը այնքան պայծառ չեն եղած որքան այժմ: Տաղանայը և ընդհանուր դժգոհութիւնը լարած են բոլորը օրւայ իշխանութեան դէմ: Ինչպէս քնական է, ժողովրդական լայն խաւերը վարակած են իշխանութիւնը փոխելու անդուստ կիրքով, առանց երկար-բարակ կանգ առնելու այդ փոփոխութեան հետեանքներուն վրա կամ հաշի նստելու տիրող կուսակցութեան առաւելութիւններուն հետ: «Փոխեց իշխանութիւնը», «փորձենք միւսները», այս է տիրական տրամադրութիւնը: Այսուհանդերձ դժուար է ըսել, թէ Հուվերը պարտած է այժմէն, որովհետև Հանրաստեղծականները անհեթիօրէն ուժեղ և լայնատարած կուսակցութիւն են և զգեալ անցնելու ժամանակ ձի չեն փոխելը՝ նշանաբանով սկսած են ողողել ընտրապայքարի:

Արտասահմանի դիտողներու համար չահեկանութենէ՛ գուրկ չէ նաև ընդդէմ, թէ այս ընտրապայքարին Դեմոկրատ կուսակցութիւնը միանգամ ընդմիշտ մտաւորութեան է աւած Արդևլու Դանակցութեան անդամակցելու Ռուլերեան տեսակէտը, որուն համար 1920-էն առդին այնքան նիզակներ ջարդուեցան, և ալ չհարցը Հանրաստեղծական կուսակցութեան նման վերջնականապէս փակած կը նկատէ՞: Ռուլերին հետևորդ ու հասարակութիւնը, որոնք անոր գերեզմանին վրա կերպնուն ամէն առթիւ, այս կէտը փոխաբերմամբ մազալափ իսկ տարբեր մտածողութիւն չունին այժմ՝ Հանրաստեղծականներէն:

Աւելորդ է միւս մանք-մունք հոսանքներու կատարելիք դերին վրա կանգ առնել, որովհետև բոլորի համազումար քա՛նքերը, Ընկերվարականներն ալ մէջը հաւելով, քանի մը միլիոնէն անդին չեն կրնար անցնիլ, մինչ այս մեծ ընտրապայքարը կը դառնայ մօտ 30) միլիոն քա՛նք շուրջ, որ ճնշող մեծամասնութեամբ պիտի բաժնէ երկու մեծ պայքարողներու միջև:

Այն յոյսերը, թէ մէկ կամ միւս կողմին յաղթանակը նպատաւոր կամ աննպատաւ անդադարձում կրնայ ունենալ տնտեսական տաղանայի վերացման, մեղմացման կամ խորացման ու ստատակացման ուղղութեամբ, արդարանալի չեն, որովհետև պայքարող կողմերու առաջադրած միջոցները և կուսակցական ղեկավարութեանց մտայնութիւնները բաւ էութեան նոյնաման ըլլալով, անոնց այսուհետև կատարելիք դերերն ալ բաւ էութեան իրարմէ՛ հիմնայայտ տարբեր չպիտի ըլլան, դեռ հաշի շատած այն իրողութիւնը, թէ տաղանային պատճառները շատ աւելի ծաւալուն ու բացմազած են և տնտեսական այժմեան բարդ օրէնքները դիրաւ չեն եթեարդիւր այս կամ այն դրամատիրական կուսակցութեան ցանկութիւններուն ու առաջարկած միջոցներուն: Հանրաստեղծական կամ Դեմոկրատ կուսակցութիւններու պլանֆորմներէն դուրս մնացող աղականք են, որ կը վարեն այժմ կեանքը Մ. Նահանգներու մէջ, որով ընտրապայքարի ելքին անդադարձման սահմանը խիստ նեղցած է:

ՍՍՍՏՈՒՐ

*) Եի՛մալոյի այս տարւայ համագումարին մէջ խօսք չեղաւ և Հայաստանի մասին, մինչդեռ նախորդ համագումարի մշակած պլանֆորմը հայկական հարցին տուած էր յստակ տեղ մը:

ԱՅՐՈՒՔՆԻ ԲԱՐԵՆՈՐՈՂՈՒՄԸ ԹԻՒՐԻԱՅՈՒՄ

II

1926ի նոյեմբերի սկիզբներին այրութենի խնդիրը նորից քննեց լրագրական և հասարակական շրջաններում: Ասիթը, այն տեղեկութիւնն էր, որ Քիմայի ճնշման տակ կրթական գործավարը, վերջապէս, որոշել է կազմել նոր այրութենի խնդիրը ճնշող յանձնաժողով և որ յանձնաժողովի մէջ առաջարկած է մտցնել Հիւսէյին Ջաւիդին և լատ. այրութենի միւս կողմնակիցներին: Ջաւիդը հաստատեց, որ իրեն առաջարկած է մտնել յանձնաժողովի մէջ և սաայ, թէ ինքը բարենորոգման կողմնակից է և թէ իր կարծիքով թիւրքիսան սոյապազ պէտք է ընդունի ֆրանսական այրութենը: Կիսապաշտօնական «էքօ դը թիւրքի» պաշտպանեց Ջաւիդին: Այս անգամ բարենորոգման թնամիներէ զեկավար ֆէոդրուլու Ջաղէ Ծուազը որոշեց բացայայտուել դուրս գալ լատ. այրութենի դէմ: Իր գրոյցներում լրագրականի հետ, ինչպէս և յատուկ զեկուցումներում Պոլսում նա որոշապէս յայտարարեց, թէ իր շանդուլով արար. այրութենը աւելի յարմար է թիւրք լեզուն, քան լատինականը և թէ արարելիքի փոփոխութիւնը կանցնի առանց վերելլայրութի միայն այն աղբերի մէջ, որոնք պատմութիւն չունին, օրինակ, արաբացիները և որ թիւրքերը իբրև զաղաքակիրթ և պատմական աղբ, չեն կարող աղբապէս թեթևօրէն լուծել հարցը:

Ֆէոդրուլու Ջաղէի սուր ելոյթը ընդդէմ լատինական այրութենի, իբրև միակ թրքական գիտնականի, մեծ արդեցութիւն գործեց նախարարական շրջանակներում, և հարցը նորից հանեց օրակարգից: Արարական այրութենի յաղթանակը համարուած էր ապահովուած, այն աստիճան, որ թիւրք Օշարիների կենտրոնի մշակութային յանձնաժողովը (որի մէջ մտնում էին թիւրքերիմ ականաւոր գործիչները, ինչպէս Մէհմէդ էմինը, Համդուլա Սուրիֆի և Իսուսեֆ Աչուրան) սեպտ. 23ին որոշեց լրա՝ ընծայել նոր թրքական բառարան (կազմած գիտնական Վեյիլ-Ջէյիբի կողմից) և միջնորդութիւն յարուցեց այդ նպատակի համար յատկացնելու 6000 լիրա: Յանձնաժողովը ստացաւ պահանջուած դրամը և ձեռք դարձրեց բառարանի սպազրութեան արարական տառերով: Նախքան ֆէոդրուլու Ջաղէի ելոյթը մի հետաքրքիր դէպք տեղի ունեցաւ Պոլսի համալսարանի փիլիսոփայութեան ուսուցչապետ Շելիբի հետ: Սա յայտարարեց լրագրիչներին, թէ անհրաժեշտ է ոչ միայն այրութենը բարենորոգել, այլ և լեզուն, և ի միջի այլոց գործածելու հետեւալ բառերը՝ «թիւրք լեզուն ինձ փայտէ տակ է յիշեցնում, մինչդեռ արեւմտեան լեզուները զարէ չիւնութիւններ են: Կը գայ վարկիանը, երբ մենք մեր փայտէ տակում այլ ևս չուն չեց պոյ մեզ»: Այս նախադասութիւնը նկատուեց որպէս կոչ հրաժարելու թիւրք լեզուից, և զժբախտ ուսուցչապետի վրա ամէն կողմից թափուցին սաստիկ հայհոյանքներ: «Ենի Սոն» թիւրքի նոյն իսկ հարց բարձրացրեց, թէ արդեօք թոյլատրելի՞ է պահել ուսուցչապետի արհիւնում մի մարդու, որը զարողուած է հրաժարուած «մեծ և սրբազան լեզուից»: Ուսուցչապետը զեկուծեմբերի սկզբին ստիպուած եղաւ հրապարակ գալ մի նոր ևս երկար յայտարարութեամբ, որտեղ ասուած էր, թէ նա լեզուից հրաժարուած չի զարողել, այլ իր խօսքը այն մասին էր, թէ պէտք է՞ որեւէ օտար լեզու ընդունել գիտական աշխատութիւնների համար: Ծայրայեղ «ազդայնականներին» այդ յայտարարութիւնն էլ

չզոհացրեց այն պատճառարանութեամբ, որ թիւրք լեզուն բաւականին հարուստ է կէանքի և գիտութեան բուրբ ճիւղերի համար:

Թէև լատինացման հակառակորդները փորձամասնութիւն էին կազմում, բայց նրանք այնպիսի վճռական պայքար էին վարում, որ հարցի ուսումնասիրութեան համար յանձնաժողով յաջողեց տեղեկ միայն 1926ի յունարին: Յանձնաժողովը կազմեց «թիւրք լեզուի կոմիտէ» անունով. նրա մէջ մտան Հիւսէյին Ջաւիդը, Ռէհիբը, Ռուլուսին, Ահմէդ-Ջէվադը, Մուսթաֆա Ասիմը, նաև Քէրրիբուլու Ջաղէ Ծուազը: Յանձնաժողովի աշխատանքները շատ դանդաղ էին շարժուում, որովհետև անդամների մէջ տիրում էին մեծ տարաձայնութիւններ: Այն սպաւորութիւնն էր ստացուում, որ նոր այրութենի հակառակորդները շուրջ ուսումնասիրութեան պարտաւոր մոլութեան էին դառնալուստում նրա աշխատանքները: 1927ի օգոստոսին Քիմային շրջապատող անձերի մէջ լուր արարածեց, թէ Քիմայը որոշել է այլ ևս յանձնաժողովներով գործը չձգել և մի քանի ամուսայ ընթացքում խնդիրը լուծել յօղուս լատինացման: Այդ լուրերին, իբրև հաստատուած հրապարակ եղաւ Ազգային Մեծ Ժողովի փոխ-նախագահ Հասանը և յայտարարեց, թէ լատինական այրութենը չափազանց անհրաժեշտ է, հէնց զէթ այն պատճառով, որ թիւրք լեզուն ազատագրի արարական և պարսկական գերութիւնը և թէ բոլոր պայմանները կան անմիջապէս ընդունելու լատինական այրութենը: Երբ Եոնուս Նալիկ յայտնի դարձաւ, որ իբրջ Քիմայը լատինական այրութենի կողմնակից է, իսկոյն հրապարակ եկաւ (1927ի օգոստոսին) իր «Ճումհուրիէթ»ում և երեք յօդածներով, հակառակ իր նախկին համոզմունքների, ջանաց ապացուցանել լատինական այրութենը անմիջապէս ընդունելու պէտքը: Այդ յօդածները չեթիւնին էր. թիւրք մամուլը և դրականութիւնը հասել են զարգացման այն ստիճանին, որ այլ ևս ոչինչով յետ չեն մնում Արեւմուտքից, բայց թիւրք գրքերի և թերթերի ընթերցումը շատ թոյլ է: Թիւրք ամբողջ մամուլի տարածումն այժմ կազմում է 10% մէկ եւրոպական մեծ թերթի (օր. «Պոի Պարիզիէն») Գլխաւոր պատճառ արարական այրութենն է, ուստի հարկաւոր է ընդունել լատինական այրութենը, և հարկէ, մանրակրկիտ և լուրջ ուսումնասիրութիւնից յետոյ: Հակառակորդները յենում են ձայնորնայի օրինակի վրա, բայց այդ սխալ է: Ճապոնական այրութենը թրքականը հետ է, բայց նա էլ հաւուած է յուշիքնուտ լուսաւորութեան զարգացման համար և այն աստիճան, որ իրենք ճայտնացիները երկար ժամանակ արդէն մասնուծ են ընդունել լատինական այրութենը և նաև ընդունել որեւէ օտար լեզու: Թէ արարական և թէ լատինական այրութենները ընդհանուր երկրպագական աղբիւրից են ծագել, այդ պատճառով թիւրքերը ընդունելով լատինական այրութենը ընդունած կը իննն միայն այդ ընդհանուր աղբիւրի երկրորդ ճիւղը: Պահպանողականները զէմ են լատինական այրութենից, բայց ինչպէս այս խնդրում, նաև բարենորոգումների խնդրում նրանք ենթակալ են զգացումներին և հաշի չեն առնում բանականութիւնը: Բանականութիւնը ստուծ է, որ բոլոր զարգալիքեւած աղբերը ընդունել են լատ. այրութենը, քայքի ճայտնացիներէրից և չինացիներէրից, որոնք չեն պատկանում փիւնիկեան - Լեկոյտական զաղաքակրթութեան. և թէ

Թիւրքերն ուզում են հասնել միւս ժողովուրդների ցա-
ղաքակրթութեան, պարտաւոր են ընդունել լատինական
այբուբենը՝ Դեռ պատերազմից առաջ արաբ. այբուբե-
նի շնորհիւ ամենալաւ դիրքը Թիւրքիայում տարածւում
էր առ առաւելն 2000 օրինակ, իսկ այժմ աւելի է պա-
հասել։ Ժողովուրդի յետաձգութիւնը լուսաւորու-
թեան ստպանէրում մեծապէս բացատրում է արաբ.
այբուբենով։ Վերջապէս, յայտնի է, որ Աղբէջանը և
միւս թրքական ժողովուրդները արդէն ընդունել են
լատ. այբուբեն. եթէ Թիւրքիան պահի արաբական
այբուբենը, դատաւարաւուծ կը լինի Վիտոլին կորցնե-
լու իր վերջին կայիքը Աղբէջանի և ամբողջ թրքա-
կան աշխարհի հետ։ Ժամանակը եկել է, որ լուսաւո-
րութեան գործավարը առանց յետաձգման ստեղծի յա-
տուկ յանձնաժողով, որ և կը լուծի խնդիրը։ Յանձնա-
ժողովը դուզինթաց մի շարք փոփոխութիւններ պիտի
մտցնի լեզուի մէջ՝ բարենորոգելով քերականութիւնը,
ինչպէս նաև ընդունի Արիւստուքայի մի շարք տեքստե-
ներ, որոնք թիւրք լեզուի մէջ չկան և այլն։

Աղբային Մեծ Ժողովի ընտրութիւնների աթիւթ,
1927ի օգոստոս վերջին, Քեմալը հրատարակեց մի
հրովարտակ, որով երկրին խոստացաւ ինչ որ լսեմ
բարենորոգումները, ասելով, թէ նրանք այժմ իրեն
ներկայանում են աւելի պայծառ և արմատական, զան
առաջ, ընդգծելով միտածամտակ, կարևոր հարցերը,
որ վեռ պիտի լուծեն. երկրի առաջ նրանք դնում են
մեծ խնդիրներ, և Քեմալը հայերենից զեռ լսեմ ծա-
ռայութիւններն պիտի մատուցանի»։

Կուսակցական համաժողովում (15-23 Հոկտ. 1927)
Քեմալը աւելի լուսարանից իր ընդհանուր արտասալա-
տութիւնները՝ յայտարարելով, թէ ինքը ուրիշ խն-
դիրների շարքում, ուսումնասիրում է չայբուբենի
փափուկ հարցը։ Ըստ Քեմալի համազումարում, Հոկտ.
23ին, Քեմալի անունից կարգաց մի յայտարարութիւն,
որտեղ կրկնուած էին Քեմալի վերելի խօսքերը և աւե-
նացւում, թէ՛ Անհրատեչտ է բարենորոգել թիւրք լե-
զուն այն ձևով, որ նա կարողանայ արտասայտել բոլոր
մտքերը և բոլոր զգացմանները։

Սակայն, խորագրաւորական յանձնաժողովների
կազմակերպութեան խնդիրը, ծովային նախարար Իս-
հանի դատաւարութիւնը և մի շարք ներքին գործեր
յետաձգելով՝ այբուբենի գործը և այլ ուղղութեանը
վճարական միջոցներ հնարաւոր եղաւ ձեռք առնել միայն
1928թ. յունիսի առաջին թիւերին, երբ լուսաւորու-
թեան և արդարադատութեան գործավարներ Նէջաթը և
Մահմուդ Էսապը հրատարակով յայտարարեցին, թէ
նրանք ոչ միայն լատին. այբուբենի կողմնակիցներ են,
այլ և պէտք է իրականացնել այն, որքան կարելի է
չուտ։ Յունւար 15ին Գործավարների Խորհուրդը հաս-
տատեց նոր յանձնաժողովի կազմութեան խնդիրը հան-
րային կրթութեան գործավարութեան կից Վժիթը Լեդ-
էի Յանձնաժողովը՝ անուն տակ, զլիսաւորութեամբ
Համգուլյա-Սուբրէնի և մասնակցութեան այն անձերի,
որոնք յայտնի էին իրրկ լատին. այբուբենի կողմնա-
կիցներ (օր., միջնակարգ կրթութեան բաժնի տեսուչ
Ջիլպազը, լուսաւորութեան ակաճաւոր գործիչ Ռաիֆ
փաչա Ջաղէ Փուաղը)։ Յանձնաժողովը կազմեց մի
զանի օրում, և նրա մի շարք անդամները թիւրքերում
արտասայտեցին, թէ լատին. այբուբենի ընդունելը
անհրատեչտութիւն է և այլ հարցը պիտի լուծուի մօտ
ժամանակում։ Յունւարի վերջին թիւրքերը գրում էին,
որ այբուբենի խնդիրը համարում է վերջնականօրէն
վճուած։ Այդ լուրերից հաղորդելով խորհուրդի անդ-
ամներին Քեմալը Վերջնականօրէն այն պատճառով
թիւրք բացատրեց ձեռնպահութիւնը այն պատճառով,
որ թիւրքերի տէրերը հակապի են, թէ լատին. այբու-
բեն ընդունելով՝ նրանք ստիպուած են ծախել խոշոր
միջոցներ նոր տատերի և բանողների սովորեցնելու
համար։ Միւս կողմից, առաջին տարիները, երբ որ
թիւրքերը սկսեան ստապարել լատ. այբուբենով, նրանք

զանակը աւելի կընկնի և թիւրքերը կը վնասուեն։ Ճիշտ
է, խմբագրները հասկանում էին, որ լատին. այբու-
բենը թիւրք կը տայ իրենց տողատալ մեքենայ, կրճա-
տել բանուորների թիւր և ծախքերը։ Բայց այդ բոլորը
խուս էր հետաւոր երազ։ Թիւրքերի խմբագրները
հակացնել էին տալիս, թէ իրենք մտածում են կարա-
վարական նպատի մասին։ Բարենորոգման հակաուս-
միրքները յանձնաժողովի կազմի մէջ ունէին այնպիսի
մի խոշոր դէմք, ինչպիսին էր հանրային կրթութեան
նախկին գործավար Համգուլյա-Սուբրէն, որ ամէն
կերպ խանգարում էր առաջ տանել յանձնաժողովի աշ-
խատանքները։ Նրա օժանդակութեամբ փետրուարի կէ-
սերին «Հայեթաթ» հանդէսում լոյս տեսաւ Քէոփուրու-
Ջաղէ Փուաղի հերթական յօդաւոր լատին. այբուբենի
դէմ։ Յօդուածում մասնաւորում էր, թէ Թիւրքիան
պէտք է փոխ անոնի ժամանակակից Եւրոպայից միայն
իսկական արժէքները. նրանք ովքեր առաջարկում են
համարել այբու. այբուբենից կենդանի օրինակներ են
միայն արտաքին ձևով ողևորողների։ Նրանք ենթա-
դրում են, թէ արաբ. այբուբենից հրատարակելով
Թիւրքիան կապտաւարի միջնակարգ մասցորդներից և
կարդիանայ, մինչդեռ նրանք մոռանում են, որ Թիւր-
քերին Եւրոպայից բաժանուած է ոչ թէ եւրոպական այ-
բուբենը, այլ մասնեղակարգ, դատողութեան և ըն-
կերային պայմանները։ Բարենորոգման անհրատեչտու-
թեան համոզումը, սակայն, այնքան ուժեղ էր, որ
Քէոփուրուի նոր էլոյթը միայն հեզնական վերաբե-
մունքի արժանացաւ։

Բարենորոգման կողմնակիցներից էլէլպազ Ալիֆը
Ջիւրուհիայի ձեռն Աստիթ թիւրքում պատասխանեց
Քէոփուրուին և առաջ բերեց լատինական այբուբենի
կողմնակիցների բոլոր պատճառաւորութիւնները՝ ա-
րաբ. այբուբենի զժւարթութիւնը, արաբ. այբուբենի
բարենորոգման անընդունակ լինելը, նրա ոչ ազգային
ընոյթը և այլն։ Ալիֆը եզրակացւում էր, թէ լատին.
այբուբենը կարելի չէ ընդունել հինգ տարւայ ընթաց-
քում, դրա համար պահանջուած է մի ամբողջ սերունդ։
Ժամանակի խնդիրը նորից բարդացրեց կազու-
թիւնը։ Հանրային կրթութեան գործավարութեան շըր-
ջանակներում մարտի վերջին սկսեց արժարձել այն
միտքը, թէ անհրատեչտ է դուստրել բոլոր ձեռնհաս
անձերի մի համաժողով զննելու համար այբուբենի,
լեզուի և քերականութեան խնդիրները։ Անհրատեչտ է
և օտար մասնակցի տների մասնակցութիւնը։ Անձնակո-
տեսակի տների համար ենթադրում էր այլ վից ամիս
ժամանակ, այն պայմանով, որ համաժողովը զննի անձ-
նական տեսակի տները և հնարաւորութիւն տրուի դուրս
զալու նաև լատին. այբուբենի հակաուսմիրքներին։ Ին-
կիրիի պաշտօնաթիւրթ «Հաքիմէթթը Միլիէ» մարտ
15ին խրախուսեց այդ մտադրութիւնը՝ աւելցնելով, որ
կրթական գործավարութեան լատին յատուկ հարցարան պէտք
է դրկէ բոլոր մասնակցի տներին, յետոյ հրատարակէ
մասնակցի տների պատասխանը, զննի համաժողովում և
մամուլի վիճարանութեան զննի։ Հիմնաւորումը այս
ձգտումը՝ պաշտօնաթիւրթը ասում էր, թէ Ռուսաստան
թիւրքերը արդէն հրատարակում են իրենց թիւրքերը
լատինական այբուբենով և որ արժատեչտ յօդուա լատ.
այբուբենի մեծ չափերի է հասել, բայց լատին. այբու-
բենը Ռուսաստանի թիւրքերի համար ընդունեց հապ-
ճեպով և չունի բաւականաչափ հիմնաւորած գիտական
հիմքեր, թիւրքերը ուզում են աւելի լաւ արդիւնքներ
ստանալ։ Այս պատճառով յանձնաժողովի անդամների
մէջ սկսեցին տատանումներ և մի ջանիւրը հեռացան
յանձնաժողովից, որով լատին. այբուբենի զննութեան
խնդիրը ընդհատուեց։

Այս ամենը նոր եռանդ ներշնչեց լատին. այբուբենի
հակաուսմիրքներին և Քէոփուրու Ջաղէն մարտ 29ին
նորից հրատարակ կաւ մամուլում լատին. այբուբենի
դէմ։ Նա յայտարարեց, որ այբուբենի պէս խոշոր գի-
տական խնդիրները չեն կարող լուծուել վարչական

սու մնասիրող յանձնատնորոյց, որի մէջ մտան պատգամաւորներ Սպարո-Քաղբին, Պալիւ-Քրիկին, Խուշնէ-ՀրէլՔր և ուսուցչականներ ու զատառուներ Խմին, Իսահան, Իրրահիմ-Իրանդի, Տաղր-Ահմէդ, Ալվալ-Ռահիմ, լեզուները նախկին դասատու Պոլալ Նամալարանում Ալվալ Իրրահիմ և Խուշնէին Աւալյն նիտում էր ընտրուեց մի ենթալանձնատնորոյ ընկնու Նամար, ի՛նչ որը եւրոպական շարժումները աւելի յարմար է թիւրքական լեզուն աւելցնելու, որ լատին․ այբուբենի հարցը որոշած է, բոլոր թիւրքերը յունիսին իրենց կերտում հրատարակեցին լատին․ այբուբենի գտնել և աճին թիւրք իր ձևով ։ Յանձնատնորոյ ստիպւած եղալ յունիս 30ին հրատարակել պաշտօնական դեկրէց, որ ինք որ մի որոշում դեռ չի ընդունին ։ Քիմալի յոյսերը նոր յանձնատնորոյ արդարացրեց ։ Իր յուլիս 8ի և 12ի նիստում ընդունեց այբուբենի վերջնական նախադիւծը, ինչպէս նաև ուղղագրութեան և քերականութեան նախադիւծը ։ Յուլիս 17ին նախապէս նախեցին Ըս-մէթի կողմից, որն իր հաւանութիւնը յայտնեց ։ Համաձայնութիւն չէր կախացել միայն երկրորդական կէտերի շուրջը և որոշեց նոր ուսումնասիրութեան ենթակին ։

Նոր այբուբենի Նամար յանձնատնորոյ տառեր ընտրեց Քրանսական, անդրիական և լատինական այբուբենները՝ մերժելով բոլոր այն տառեր, որոնք արտայայտում են երկու կամ երեք նշաններ ։ Կիրառեց հետևեալ սկզբունքը․ նոր այբուբենը, ինչքան հնարաւոր է, պէտք է ունենայ միջազգային նշանակութիւն և թիւրք բառերը պէտք է գրուեն այնպէս, ինչպէս որ արտասանուած են ։ Նոր այբուբենի մէջ մտցեց 10 տառ առանձին նշաններով (Քրանսական այբուբենն ունի 14 տառ նշաններով և 12 տառ կրկնակի) ։ Նոր այբուբենով հնչադրուած է չարագանց անունները և գիտական-ճարտարագիտական բառերը ընթերցուած ։ Յանձնատնորոյ յանձնաժողովը զբաղուել և որոշեց բարենորոգել նաև քերականութիւնը, այն հիմքով, որ բառերը գրուեն այնպէս, ինչպէս որ արտասանուած են ։ Թիւրք լեզուի մէջ գործածուող բոլոր օտար բառերը ենթարկուեցին այն կանոններին, որոնք դիկալորուած են թիւրք լեզուն ։ Պարսկական և արաբական հոլովումները, յոգնակիները և այլն ոչնչացուեցին ։ Վերջապէս, յանձնատնորոյ որոշեց ձևանարկել նոր մեծ բառարանի կազմութեան ։ Ենթադրուած էր բոլոր այդ նախազօծեր տպագրել և յանձնել կառավարութեան և իրաւասու անձանց ։ Նաև այս յանձնատնորոյ ժամկէտներ խնդրուած չեղեց ։ Իր եզրակացութեան մէջ յանձնատնորոյ ատմադրեց հնկերիում գուժարել յատուկ մի Նամատնորոյ մասնակցութեամբ հեղինակուող ուսուցչականներ, մամուլի, կառավարութեան, գրականութեան և բանակի ներկայացուցիչներին ։ Յանձնատնորոյ ենթադրուած էր, որ դպրոցական դասատուներ կարելի է յատնականացնել եոթ տարում ։ Հասարակական կենտրոն լատինացման Նամար պահանջում էր աւելի երկար ժամանակ, այսինքն՝ փոխանցիկ մի շրջան, ուր պիտի բացուէին ժողովրդական դասընթացներ և պիտի քարոզէր նոր այբուբենը ։ Վերջացնելով իրենց աշխատանքները ինկերիում՝ յանձնատնորոյի անդամներն օգոստոս 5ին մեկնեցին Պոլիս և այսուից օգոստոս 6ին կրթական գործակարութեան ներկայութեամբ հաստատեցին իրենց որոշումները և յանձնեցին Քիմալին ։

Այս որոշումների հիման վրա բոլոր թիւրքական և Քրանսական թիւրքերը սկսեցին յուլիսից իրենց ընթերցողներին տալ ամենօրեայ գասեր, միտամանակ դասարաններում շարունակուած էր դասընթացների կազմակերպումը ։ Մասնաւորապէս յուլիսից նման դասընթացներն բաց արաւ Պոլսոյ տպագրիչների ընկերակցութիւնը ։ Բայց ժամկէտեր խնդրել շարունակուած էր ատաղացնել թիւրքագրութիւնը, որոնք բաժանուած էին և պաշտօնական շրջանակների կողմից ։ Այսպէս, պաշտօնակերթի իր յոյուածներում (23) յուլիս, 10) յուլիս, 2, 8 և 15 օգոստ․) գրուած էր, թէ այբուբենի ներմուծումը պէտք է սկսել նախակրթարաններից, այնպէս որ քարենորոգումը լրանայ, երբ որ նախակրթարանի այժմեան աշակերտները վերջացնեն Նամարարանը ։ Իրա Նամար պէտք է կառավարութեան կից ստեղծել յատուկ կոմիտէ ։ Նաև շարունակուած էին վեճերը, թէ որ այբուբենը ամենալավն էր թիւրքերին ։ Պաշտօնակերթի նոր մտաք հրապարակեց, թէ պէտք է ընդունել անդլամերիկեան այբուբենը, որպէս ամենալավն և գեղեցիկը ։ Այստեղ լեզու պաշտօնակերթի մասնաւորում էր այն ատակրութիւնները, որ ունի նոր այբուբենը կը հնչուացնի թիւրք լեզուի տարածումը փոքրամասնութիւնների և օտարների մէջ, կազատի թիւրքան Արեւելից (արաբ․ այբուբենը նոյնքան բաժանուած է թիւրքան Եւրոպայից, որքան Ֆլաթը), կազգայնացնի օտար բառերը, կենթարկի պարսիկ և արաբ բառերը թիւրք լեզուի ոգուն և քերականութեանը, կը վերջացնի արաբ-պարսկական պաշտօնական ոճը, կը հնչուացնի թիւրք լեզուի ընդհանուր ուղղագրութեան բարենորոգումը, հնարաւորութիւն կը տայ ստեղծելու թիւրք լեզուի հնձարան և ազգային մասնաշարան և այլն ։ Պաշտօնակերթի յուլիս 10) յոյուածում աւելացուած էր, որ լատինական այբուբենը անբաժանուած է նաև այն մտքով, որ պէտք է վերջացնել թիւրք լեզուի փոքրամասնութիւնը բոլոր ասպակրկներում, որովհետև քիչը լեզուի վերջնականութիւնները շատ վրտանդաւոր են ։ Թիւրք լեզուի վերջնականութիւնը և տարածման առջև հենց այն ժողովուրդների մէջ, որոնք դիտուեն թիւրքերին և խօսում են թիւրքերին ։ Միև կողմից լատինական այբուբենը կամայական կայր քաղաքի և թիւրքերի հետաւոր դիւղերի միջև և հնարաւորութիւն կը տայ ոչնչացնել զանազան բարբարները (ակնարկ լազերի, չերքեզերի և քերքերի վրա) ։

Մասնաւոր թիւրքերն էլ չէին կարող չլինել ժամկէտների շուրջը ։ Օգոստ․ 10ի ձեռնուղարկութեամբ գրուած էր, թէ արագ ներմուծման կողմնակիցները սխալուած են, որովհետև անուայն տաք տարի է Նարկաւոր ։ Օգոստ․ 2ի ձեռնուղարկութեամբ էր 15 տարալ պայմանագրում և որ առաջին շրջանում լատին․ այբուբենը պէտք է սովորեցնել միայն դպրոցների բարձր դասաններում և հասարակութեան մէջ, որովհետև եթէ ստորին դասարաններից սկսել, նոր այբուբենը կը լինի անօգուտ, որովհետև հասարակութեան մէջ դեռ գործածութեան մէջ կը լինի արաբ․ այբուբենը ։

(Վերջը յաջորդ անգամ)

Թ ՈՒ Ր Ք Ի Ո Յ Ե ՈՒ Ր Զ

Միջազգային մամուլը չափէն աւելի գրադեցաւ այս օրերս Թուրքերով, անոր Ազգերու Դաշնակցութեան մէջ ընդունելուն առթիւ: Ամբողջ աշխարհ ծանր օրեր կանցնի: Պատերազմի ուրուականը կը սաւառնի օդին մէջ: Ժողովուրդէ ժողովուրդ անվտանգութիւնը վերջին ծայր ջղապրդիւ լինեալ ստեղծած է ամէն կողմ: Կաղաքական գերակշռութեան մարմանը սրած է անոր ժակները: Նախանձը կը կրծէ բոլորին սիրտը: Մեծ Պատերազմէն դժգոհ պատուութիւններ — յայթական թէ պերսուած — կը շարունակեն պլուտոնի միջնուորտը: Սպառնալիքներով կուզին ձեռք բերել ինչ որ մերժուած է իրենց, կամ վերստանալ ինչ որ կորսուցուցած են:

Այս խոսնաշիտի կայուցութեան մէջ՝ Թուրքիոյ անդամակցութիւնը Ազգերու Դաշնակցութեան՝ կը նկատուի բարեզէպ նշան մը, խաղաղութիւնը ամբապնդելու կուսած ուշագրաւ պարագայ մը: Չէ՞ որ Ազգերու Դաշնակցութիւնը պահապան հրեշտակն է խաղաղութեան: Չէ՞ որ Թուրքիան իր աշխարհապահական դիրքով և այսօրուան քաղաքական կեցեալով կարևոր ազգակն մը կը հանդիսանայ խաղաղութեան խանդարման: Աշխարհ կը սարսափի պատերազմէն, որուն հետևանքները արտօր աւելի խոր կը գզգզ քան երէկ: Ու բանի օրերը անցնին, նոր պատերազմի մը մղձուռանքը ա՛յնքան աւելի կը մտալիկ մանաւանդ յայթական պետութիւնները:

Շատ յոսկանշական է համակրանքի այն աննախընթաց ցոյցը, որով Ժընևիւր մէջ 43 պետութիւններ, միաձայն քեշակութեամբ իրենց ծոցին մէջ ընդունեցին Թուրքիան: Այն Ժընևեր որ պաշտատեսնչ և արգարատէր մարդկութեան խիճը հանդիսացած էր երկար տարիներ, որ յանուն արարչութեան կորովի բողոք բարձրացուցած էր ջարդարար դահիճներուն անորակիլ ոճիրներուն դէմ, ու պաշտպանած անիրաււած ժողովուրդի մը սրբազան դատը, այս անգամ փոխած էր կերպարանքը: Եւ ինչպէս գեղեցկօրէն նկարագրած էր Ժուռնալի խմբագիրը՝ Մէն-Պրիս, Յուլիս 18ի արտակարգ Ընդհանուր Ժողովին մէջ ո՛չ մէկ ուրուական ցցեցաւ 43 յարգելի պետութեանց ներկայացուցիչներու աջքին՝ երբ անոնք միահամուռ մտա կը բարձրացնէին Թուրքիան ընդունելու համար քաղաքակիրթ ազգերու միութեան մէջ:

Ազգերու Դաշնակցութեան մէջ ընդունելու համար պէտք չկայ միաձայնութեան: Քիչներու երկու-երրորդը բաւական է: Թուրքիոյ նկատման այս բացատրիկ պատիւը իրապէս տարօրինակ է: Ազգաբար բաւական չէր սակայն: Հոն ներկայ պետութիւններէն իւրաքանչիւրը մրցումի ելած էր իր գրաքցիկն հետ, փաղաքշահիքի խօսք մը աւելի շաղկապու համար Թուրքիոյ հասցէին:

Նախադահ Հիմանա, Պէլճիբալի ներկայացուցիչը բարեկարգուտ մաղթելէ վերջ Թուրք պատուիրակներուն, րտաւ:

— Թուրքիա, որ Եւրոպայի ծայրամասը կը կաղմէ, քաղաքակիրթութեան մէկ արտաբայտութիւնն է: Դժեղակ փորձութիւններէ մէկ, Թուրքիա մեծ բարեւըջում առաջ բերաւ իր ներքին կեանքին, բարեբուն ու սովորութեանց մէջ: Գործնական կեանքի մէջ Թուրքիա ի գտն զրաւ այնպիսի քանքեր, որոնք իր ուժն ու կենսունակութիւնը ցոյց կուտան: Նոր մարաքազաք մը ստեղծելու իր ճիղին մէջ յաջողեցաւ մէջնեղ բերել քաղաք մը, որ բոլորովին ինքնատարկ դրոշմ ու-

նի: Թուրքիոյ մեր մէջ մտնելովը, Ազգերու Դաշնակցութեան ուժը պիտի աւելնայ: Թուրքիա պիտի օգտուի իր բարեկարգութեան և զորակցութեան այն իրաւունքներէն, որոնք Ուիտին շնորհիւ սպահնուած են բոլոր անդամներուն: Մեր հրաւերին տւած պատասխանին մէջ, Թուրքիա կը հաստատ թէ իր կեանք զաշխարհները երբեք չեն հակասեր Ազգերու Դաշնակցութեան սկզբունքներուն: Ասիկա կը համոզէ և կապահովցնէ մեզ թէ՛ Թուրքիա, իրեն գորտաւ պղ մը, որ նպարտ է իր պատմական անցեալով, պատուով ու հաստատութեամբ պիտի գործադրէ իր ստանձնած պարտականութիւնները:

«Թուրքիոյ Ազգերու Դաշնակցութեան մէջ մտաբերարեքստիկ զէպ մըն է, քայլ մը՝ զէպի Դաշնակցութեան ապագայ բարգաւաճման, դրաւական մը՝ թէ խաղաղութեան երաշխիքները համաշխարհային հանդամանք մը պիտի ստանան»: (Միլիիէթ, 19 յուլիս):

Երբ եւրոպայիները քարտեքստիկ զէպը կանաւեն Թուրքիոյ մտաբեր Ազգերու Դաշնակցութեան մէջ և ճարտասանական մարդանքեր կրնն այս առթիւ: Թուրքերը իրենք ամպէս ցոյց կուտան թէ այնքան ալ կարեւոր չէ այդ խնդիրը իրենց համար: Կրտսն թէ արդէն տարիներ է ի վեր իրենք կը մասնակցին Ժընևի գանազան աշխատանքներուն, որոնք տեղի կուենան Ազգերու Դաշնակցութեան նախաձեռնութեամբ կամ հովանաւորութեամբ: Առաջին անգամ ինկիրի ներկայացուցիչներ ունէր Եւրոպայի միութեան նախապատրաստական մարմնի և սպատազինութեանց սահմանափակման յանձնաժողովին մէջ:

Ասկէ գտաւ, Թուրքիա տարա տարիէ ի վեր իւրացուցած է Ազգերու Դաշնակցութեան սկզբունքները, որոնց գլխաւորներն են խաղաղութիւն և համընդարձակութիւն: Եթէ մինչև հիմա չէր մտած հոն, պատճառը վերջին տարա տարիներու զէպերն են: Ապա թէ ոչ Թուրքիա — քան զՊալսի պապական—Ազգերու Դաշնակցութեան անդամներէն աւելի պաշտպանած է Ուիտին սկզբունքները: Միակ ցաւը որ ունի այն է թէ՛ այդ սկզբունքները չեն գործադրուած ամէն ստան: (Միլիիէթ, 20 յուլիս):

Երկու խնդիր կը դրադեցնէ Թուրք մամուլը այս առթիւ: Նախ՝ ի՞նչ օգուտ պիտի քաղէ Թուրքիան Ժընևի արխապատեսն մէջ մտնելին: Երկրորդ՝ ի՞նչ զիրք պիտի ընէ այսուհետև Ռուսիոյ հանդէպ:

Օգուտն հարցին չուրջ շատ չին ուղեր արտաբայտուի, մանաւանդ կեսապաշտօն թերթերը: Սակայն գաւազնաթերթերը, որոնք ո՛չ մէկ վախ ունին սեւին սեւ և ճերմակին ճերմակ ըսելուն մէջ, բացէ ի բաց կը պտանան — «Աճիմա որ Ազգերու Դաշնակցութեան մէջ մտանք, ճշմել դրամ իրքցնելու նախնէ», այսպէս և, կըսեն, չա՛հ մը չպիտի ունենանք և վրայդ ի վրայդ տարաւէ տարի որոշ գումար մըն ալ եթէ վճարենք, անոր ծախքերուն մասնակցելու համար չճարախրելը չի բաւեր, տիշ էիրաքը ալ պէտք է տալ, կը բացաղանչուրէ թերթ մը, որ իրրև օրինակ ցոյց կուտայ Աւստրիան, Յունաստանը և Լեհաստանը, որոնց օգնած է Ազգերու Դաշնակցութիւնը:

Կերևի թէ կարգ մը Փրանսէիէն թերթեր ալ այս իմաստով արտաբայտուած են: Միլիիէթ (20 յուլիս) կը պատասխանէ որ եթէ Թուրքիոյ նպատակը դրամ քաշել ըլլար, Ազգերու Դաշնակցութեան մէջ կը մտնէր այնպիսի օրէն մը երբ Եւրոպայի մէջ առատ դրամ կար:

«Մենք օգտուելու համար չէ, այլ ծառայութիւն մատուցանելու համար կը մտնանք Արդիւրու Դաշնակցութեան մէջ: Մեր ծառայութիւնը պիտի ըլլայ ամբողջով խաղաղութիւնն ու ապահովութիւնը?»:

Տարակոյտ չկայ թէ նիթապէս օգտուելու հետեւնկարը գլխաւոր ինկադրէնէ է եղած Թուրքիոյ այս քայլը ստնկուն: Կարգ մը ղեկավար ցոյց կուտան նոյն խնդիրը Թուրքիա այս ուղղութեամբ խոստումներ ալ տան է: Պատճառներ կան կարծելու թէ այդ խոստումները առաւելապէս կը բխին Ֆրանսայէն, որ զբխաւոր պարտատէրն է Թուրքիոյ: Ֆրանսացի դրամատէրին շահը կը պահանջէ անուշտ թոյլ չափ որ Թուրքիա սնանկանայ, որպէսզի կարենայ իր ստնկութիւնը դանձել: Եւ որպէսզի սնանկը ինքզինքը դառնէ, յաճախ պարտաւորները դրամական աջակցութիւն կրնն անոր: Այլապէս կրնայ բոլորովին վտանգել իրենց ստնկութիւնը: Հանրային Պարտքի Ֆրանսացի բաժնետէրերը վերջապէս պիտի դառն այն եղբակցութեան թէ՛ որպէսզի Թուրքիա ի վիճակի ըլլայ, տարէ տարի կործնները վճարել կանոնադրաբար, դրամական աջակցութիւն պէտք է ստանայ, իր անստանութիւնը վերականգնելու և ելե՛նուտը կարգի դնելու համար:

Երկրորդ օգուտը, որ առջինին հետ կապ ունի, Ֆրանսայի հետ բարեկամութիւնն է: Ֆրանսեթուրք բարեկամական յարաբերութեանց նոր շրջան մը սկսելու միայն է: Այս սեփականէտն չորս յատկանշական են Ֆրանսայի վարիչ և օրէնսդիր գերագոյն մարմիններու համակրակա՛ծ արտայայտութիւնները: Երբ Թուրքիոյ հրահր ուղղութեամբ ստնկ, զանազան պետութեանց ներկայացուցիչներ եօթի երկինքներ կը բարձրացնէին դայն, գերման պատուիրակը ուղեկոչնց հին բարեկամութիւնը: Ֆրանսայի պատերազմական նախարարը անկէ վեր յմայու համար, յիշեց թէ Ֆրանսան 16րդ դարէն է վեր մեծագոյն բարեկամ է Թուրքիոյ:

Պուրկարիոյ վարչապետ պ. Մուտանոֆ Ժընեի մէջ տեսակցութիւն մը ունեցած է Պ. Հէրիոյի հետ: Մուտանոֆ կը պատմէ.

«Ֆրանսայի վարչապետը իրապէս շատ խոր համակրանքով ու գնահատանքով խօսեցան ինձի Թուրքիոյ մասին: Այն աստիճան, որ ըսաւ թէ «ի՛նչպէս պատերազմը ենք Թուրքիոյ հետ, այսինքն այս խաղաղութիւնը և ստաբիլի ազգին հետ: Բնաւ չեմ կրնար ինչը հասցնել այս բանին»: (Միլիիէթ, 25 յուլիս 1932):

Միւս կողմէ Ֆրանսայի Երեսփոխանական Ժողովը յուլիս 16ին համակրանքի ցոյց մը բրաւ Թուրքիոյ հանդէպ: Երեսփոխաններ Թորէսի (հրեայ փաստաբան), Պէրֆրիի և Իպատնէկարէի առաջարկով ընդունեց հետեւեալ բանաձեւը, որ հետագրով հաղորդեցաւ էն-կիւրիի Ազգ. Մեծ Ժողովին:

«Երեսփոխանական Ժողովը, իբրև Թարգման Ֆրանսական Ժողովուրդի անանդական բարեկամութեան, Թուրք խորհրդարանին կողմէ իր ամենասըրտասգին շնորհակարտութիւնները՝ Թուրքիոյ Ազգերու Դաշնակցութեան մէջ ընդունելու առթիւ, որուն մէջ կողմունք բարեբաատիկ ղէպը մը խաղաղութեան համար»:

Վարչապետը չուզեց ամասն մնալ համակրանքի այս բացատրիկ ցոյցէն և յայտարարեց.

«Կատարելութիւնը կուրսխանայ սեփական Թուրքիոյ մուտքը Ազգերու Դաշնակցութեան մէջ, կը յուսայ թէ այս ղէպը թոյլ պիտի տայ վերսկսել Ֆրանսայի և Թուրքիոյ միջև բարեկամական յարաբերութեանց հին աւանդութիւնը և աշխատիլ վերահաստատելու ժամանակաորապէս խղած այդ յարաբերութիւնները» (թիւրք Ժափիէ): (Թամ, 18 յուլիս):

Այս առթիւ Միլիիէթ յուլիս 19ին հրատարակեց խմբագրական մը՝ «Բարեկամական Ժողովը» խորագրին տակ, վեր հանելով Ֆրանսական խորհրդարանին և վարչապետին համակրական արտայայտութեանց իմաստը: Ահա՛ վերաբեր կէտերը.—

«— Ֆրանսա կրնայ մտածա՛ ըլլալ թէ, Թուրքիոյ հանդէպ ցոյց տրելիք ամէն կարգի բարեկամական արտայայտութիւնները շատ ղեկեցիկ արձագանքներ կարծնցնեն մեր մէջ: Որովհետև երկու երկիրներուն միջև տեւական ու անկեղծ բարեկամութեան մը հաստատուելուն ո՛չ մէկ արգելիչ պատճառ կայ: Ինչպիսեալ բար ճիշտ չըլլար վէճի առարկայ համարել կործնները ինչպիսի, որ կը յուսանք թէ խիտ մօտ ստեղնն պիտի կարգադրուի:

«Արդէն դիտենք թէ պ. Հէրիո թրքաւէր է և Թուրքիոյ հետ զործակցելու կողմնակից պետական մարդ մը: Հինգ տարի առաջ վեր կը կեղեցիկ նախարար էր, պ. Հէրիոյի հետ երկարօրէն տեսակցելու առիթ ունեցած էինք: Միշտ կը յիշեցէ այն գեղեցիկ խօսքերը, զորս այն ստեղն բրաւ Թուրքիոյ և անոր փառապանծ նախագահի՝ հասցէին: Այն ստեղն Թուրքիոյ և Ֆրանսայի միջև անյոժ մնացած շատ ինքերիներ կային, որոնց կարգին Մուրիոյ սահմանախիչ զորքերը: Մեծ պետական մարդիկ էր սկզբունքներուն մասին որոշում կուտան, մահաբանութեանց լուծումը վճարը չըլլար իրենց համար: Լոգաբի վերջին համաձայնութեանց առթիւ պ. Հէրիո ցոյց տուաւ թէ մեծ պետական մարդ մըն է:

«... Հարկ չկայ աւելցնելու թէ՛ պաշտօնական Ֆրանսայի մէջ միայն պ. Հէրիո և իր կուսակցութեան պատկանող երեսփոխանները չեն որ կողմնակից են Թուրքիոյ հետ բարեկամութեան: Թուրքիոյ հանդէպ կատարուած համակրական ցոյցին մասնակցեցաւ ամբողջ խորհրդարանը: Ուրեմն, Թուրքիոյ հետ բարեկամութեանը Ֆրանսայի ձգտումներուն ու հանրեան համապատասխանող բաղաբաղանդութիւն մըն է: Տարակոյտ չկայ թէ Ազգերու Դաշնակցութեան աշխատութեանց մէջ այս բարեկամութեան ակտիւ օգտակար և դրական արտայայտութեանց ականատես պիտի ըլլանք: Ամենալաւ բարեկամութիւնները անոնք են որ բազմաթիւ փորձերէ և վարանումներէ վերջին հաստատուին: Թուրքիոյ հետ ամուր և անկեղծ բարեկամ ըլլալու համար, արեւնայի կուրներով լեցուն դարեր պէտք եղան: Իտալիոյ հետ ալ լաւ և ամուր բարեկամ ըլլալու համար, ստիպեցանք յաղթել կարգ մը դժուարութեանց: Հիմա այս երկու պետութեանց հետ ալ շատ յատկացած բարեկամական յարաբերութիւններ կը պահենք: Կարգ մը փորձեր և պատմութիւնն են ներշնչած մեր աւանդական բարեկամութիւնը բաւական չեն որ Ֆրանսայի հետ ալ նոյն աստիճանի ամուր և անկեղծ բարեկամութիւն մը հաստատենք»:

Այս տողերը մեկնութեան չեն կարօտը:

Գալով Ռուսիոյ հետ բարեկամութեան, Թուրք պետական մարդիկն ու մամուլը մասնաւոր հոգածութիւն ցոյց կուտան, ուէ կերպով չվաւացնելու համար Ռորհրդային Միութիւնը: Էնկիւրիի պատգամի զործավար Թէվֆիէ Ռուստի պէյ երկու անգամ նամակ ուղղեց Մոսկուայի ներկայացուցիչին, ըսելու համար թէ Ազգերու Դաշնակցութեան մէջ մտնելով, Երբեք չպիտի դրժէ իր նախկին յանձնառութեանց: Ահա՛ առաջին նամակը՝ յուլիս 10 թւակիր, զոր նոյնութեամբ կը հրատարակեց իբրև պատմական վաւերաթուղթ.

«Պատիւ ունիմ ձեզ զրկելու Ազգերու Դաշնակցութեան մէջ Թուրքիոյ մուտքին մասին՝ անոր կողմէ եղած հրաւերին պատճէնը, ինչպէս նաև պատճէնը՝ այդ հրաւերին՝ իմ կատարելութեան տւած պատասխանին: Այս առթիւ, յանուն թրքական կատարելութեան, պատիւ ունիմ ձեզ յայտնելու թէ բոլորովին բնական է որ, Ազգերու Դաշնակցութեան մէջ՝ հաւանական մուտքէն յետոյ, Թուրքիա շարունակէ հաւատարմօրէն պահել միջկարգային յանձնառութիւնները զորս ստանձնած է ցարգ և որոնք արդէն երբեք անհաշտելի չեն այդ կազմակերպութեան անդամը և որ պարտաւորութիւններուն հետ, ջանի որ անոր ոչ միայն զլիաւոր ջանքը, այլ հիմնական նպատակն է պահպանել և տեւականա-

ցնել խաղաղութիւնը՝ ամբողջ աշխարհի մէջ: Թուրք շահրապետութիւնը իրօք, Աղլիբուր Դաշնակցութեան մէջ էր մտադրով ուրիշ բան պիտի չլինէ՝ եթէ ոչ շարունակել ներկայացած ամբողջ միջոցներով ծառայելու հաստատ խաղաղութեան մը խնայելին, որուն իրականացման երբեք չէ զարգած ջերմօրէն ընծայել էր համեստ օժանդակութիւնը»:

«Այս առթիւ, գիտնալով թէ Խորհրդային Միութեան կառավարութիւնը ի՞նչ աստիճան տողորմած է բարձր գգացումներով հանդէպ խաղաղութեան խնայելին, ուրախ եմ ձեզ հաւատարմութեամբ լինելու համար, որ եւ կը պարտւի կանգ պիտի չառնէ և ընդհատակին ան պիտի ձգտի ամբողջելու մեր երկու պետութեանց գործակցութիւնը՝ իրենց խաղաղութեան խնայելին ամենամեծ բարիքին համար»:

«Այս նկատումներով և փափաքելով ճշտորոշել մեր երկու երկիրները միացնող բարեկամական յարաբերութեանց սպառնալից զարգացումը, ստանալուով եմ զերչատունն ձեզ դիմելու անկի մանրամասն նամակ մը, այն սղիով որ 1926 Ապրիլ 23ին, Գերմանիայի արտաքին նախարարին կողմէ ուղղուած էր Պերլինի խորհրդ. զեպանին, Գերմանիոյ Ազգերու Դաշնակցութեան մէջ մտաւեցնել զիս առջև»:

Այս առաջին նամակէն վերջ, էնկիւրիի արտաքին գործակարգ յուլիս 19ին երկրորդ նամակ մը ևս յանձնեց էնկիւրիի խորհրդային դեսպանատան գործակաւտար Ալտակոֆի: Ահա՛ պատճենը.

«Պ. Գործակաւտար,

Իբր յանելած 10 յուլիս 1932 թւակիր նամակիս, պատիւ ունիմ յանուել Թուրքիոյ կառավարութեան պարզելու ձեզ հետեւեալ կէտերը.

Թուրքիոյ Ազգերու Դաշնակցութեան մասնակցութիւնը չի կրնար արդէք մը կողմէն սպազայ զարգացմանը բարեկամական այն անկողն յարաբերութեանց որոնք բարեբաւտիկ կերպով հաստատուած են Խորհրդ. Լանրապետութեանց Միութեան և Թուրքիոյ միջև, իրենց անկախութեան համար ձեռնարկուած պայքարին միջոցին. բարեկամական յարաբերութիւններ որոնց կենսունակութիւնը կը պարգւի ամէն մէկ նոր հանգրւանի մէջ:

Թուրքիոյ Ազգերու Դաշնակցութեան միանալը՝ ո՛չ մէկ կերպով կրնայ պակասնել և շարիտ պակասնել այլ յարաբերութեանց վրա հիմնուած և 17 դեկտ. 1925ին Փարիզի մէջ կնքուած դաշնագրին և 17 դեկտ. 1929ին ստորագրուած և նախորդը լրացնող պրոտոկոլէն ծագում առնող փոխադարձ յանձնարարական կարեւորութիւնը: Թուրքիոյ շահրապետութեան կառավարութիւնը երջանիկ է՝ այստեղ անդամ մը ևս հրապարակաւ հաստատելով այդ յանձնարարութիւնները.—

1. Թուրք կառավարութիւնը համոզուած է, թէ վերջոյնչաւ վաւերաթուղթերուն և մասնաւորաբար 1925ի համաձայնագրին Ա. և Բ. յօդուածներուն բովանդակութիւնը ու մէկ կերպով վնաս պիտի կրնայ հասցնել Ազգերու Դաշնակցութեան Ուստէն ծագուած առնող յանձնարարութեանց և թէ այս Դաշնակցութիւնը սկզբունքով միջազգային անսամաձայնութեանց հաշտարար ու արգար եղանակով կարգադրութիւնը սաղհոյկուտ յատկացուած կարգաւորութիւն մը ըլլալով, որչաւած է իր բոլոր միջոցներով զարծակցելի Ազգերու Դաշնակցութեան հիմը կարգող այս գաղափարին իրականացման համար:

Սակայն հակառակ Թուրքիոյ կառավարութեան ենթադրութեանց ու նախադրութեանց, եթէ որեւէ ժամանակ Ազգերու Դաշնակցութեան մէջ խնդրոյ աւարկայ խաղաղութեան սկզբունքին հակառակ և միմիայն Խորհրդային Լանրապետութեանց Միութեան ղէմ ուղ-

ղած հակամներ տեսնին, Թուրքիա իր ամբողջ ուժով պիտի ընդգրծմանայ այդ կարգի հակամներու:

2. Թուրքիա Ազգերու Դաշնակցութեան մէջ մտնել վերջ, անոր Ուխտին յանձնարարութեանց գործադրութեան վերաբերելով 16րդ և 17րդ յօդուածներուն համաձայն ստանձնելիք պարտաւորութիւնները անկիւղծօրէն պիտի յարգէ, բայց այդ պարագան ունէ կերպով շարիտ վնաս Խորհրդային Միութեան հանդէպ Թուրքիոյ ընդգրկած ջարգաբանութեան սկզբունքներուն: Յիշեալ յօդուածներու տրամադրութեանց համաձայն, Ս. Միութեան հանդէպ այդ յանձնարարութիւնները պիտի գործադրեն այն պարագային, երբ յիշեալ Միութեան կողմէ կըրող պետութեան մը ղէմ յարձակողական պատերազմ մը հռչակէ:

Այս մասին պէտք է նկատի առնել Խորհրդային Միութեան 3րդ յօդուածը: Հետեւաբար այդ Միութեան ղէմ ուրիշ պետութեանց կողմէ վերապրած բայց Թուրքիոյ կողմէ արգարացի չնկատուած այս կարգի ամբաստանութիւն մը, չի կրնար ստիպել Թուրքիան որ 16րդ յօդուածին համաձայն ձեռք առնելիք ունէ միջոցի մասնակցի:

Գալով այն խնդրին թէ Թուրքիան ընդհանուր առմամբ պիտի մասնակցի՝ թէ ոչ և կամ ի՞նչ շարիտ պետութեան մասնակցի Խորհրդային Միութեան ղէմ ուղղելիք գործողութեանց, այս մասին կարելի է դիմել Ազգերու Դաշնակցութեան մէջ մտնելու համար Ընդհ. ժողովին կողմէ Թուրքիոյ կցած հրաւերին Թուրք կառավարութեան տւած 1932 յուլիս 9 թւակիր պատասխանին այս խնդրին վերաբերելով հաւանութեամբ»:

Այս երկու նամակներէն ալ որոշ կը տեսնի Թուրքիոյ մտավախութիւնը՝ Մոսկուայի գալորթը իր վրա չհրաւիրելու մասին: «Ոչ կարեմ երկու աւրանց ծառայելը Թուրքիոյ համար չէ: Էնկիւրիի վարչները ճարակութեամբ կը խաղան երկու լարի վրա: Մէկ կողմէ Խորհրդային Միութեան բարեկամութիւնը կը պահեն, միւս կողմէ ջարգենի պետութեանց մէջ նոր բարեկամութիւններ կապահովեն: Երկու կողմէն ալ կողուին: Երկու կողմին ալ անկիւղծութեան հաւատարմութեան կը շուսյին: Երկու կողմերն ալ դիտնալով հանդերձ կեղծիքը, կը շուսյն զայն»:

Երկրորդ նամակին մէջ սիրապետող միտքը հետեւեալ է. Ազգերու Դաշնակցութեան Ուխտին 16րդ յօդուածին համաձայն, կարգ մ սաստիչ միջոցներ ձեռք պիտի առնին յարձակող պետութեանց ղէմ: Այդ միջոցներուն նախադրելու անտեսանելի և լքմտական պաշարումն է, իսկ առանկազոյնը՝ ղէմքի գործածութիւնը յանցաւոր պետութեան ղէմ: Արդ, որոշեցի այդ սաստիչ միջոցները կարելի ըլլայ գործադրել, պէտք է նախապէս հաստատել թէ խնդրոյ աւարկայ պետութիւնը «բարձրակող» է: Ըստ Թէլֆօրի իշխարի նամակին, վաղը եթէ Խորհրդային Միութեան ղէմ նման միջոցներ գործադրել պէտք ըլլայ, Թուրքիա որպէսզի պարտաւոր ըլլայ մասնակցիլ այդ միջոցներուն, պէտք է հաւանի և հաստատել թէ Մոսկուայ յանցաւոր է: Եւ որովհետեւ Էնկիւրի երբեք չպիտի համարձակի յանցաւոր հանց Մոսկուայ, այդ յօդուածի տրամադրութիւնն ալ մեռեալ սառ պիտի մնայ Թուրքիոյ համար: Այսպէս ուրեմ, Թուրքիա հանդիսաւորապէս կը յայտարարէ թէ Աղբերու Դաշնակցութեան մէջ կը մտնէ այն պայմանով, որ ինքը չպարտաւորեն ունէ թշնամական միջոցի դիմելու հիւստի իր մեծ դրացիին ղէմ:

«Ուստիդ հետ մեր աւանդական բարեկամութեան ու աշխարհաբարեան դիրքին բերումով, անօրուտ չէր պարզիլ այն կէտը ա՛յն օրը որ Ազգերու Դաշնակցութեան սեմին ներս կը մտնէք», կը գրէ Ահմէտ Շիւքրի, Միլլիէթի մէջ (20 յուլիս):

Նոյն թերթին խմբագրապետ Սըրուքի երեսփոխան Մահմուտ, քանի որ խմբագրակազմները զրեց, հաստատելու համար թէ չեն բարեկամութիւններն ու հին դաշնագրերըր ունէ վնաս չեն կրեր Թուրքիոյ Ազգերու Դաշնակցութեան մէջ մտնելէն: Այս վերջինին անդամ

և՛ ոչ-անկամ բոլոր պետութեանց հետ կնքած համաձայնագրերնէր ներշնչւած են Փարիզի Ռեախն (Պրիսմ-ֆէլլը) համաձայնագրերը: Գալով Ռուսիոյ, այնտեղ ո՛չ ոք խաղաղութեան վէճ է, ընդհանրապէս հոն ալ առաջարկող սկզբունքն է խողովութեան խտրելը: Եւրոպա և ամբողջ աշխարհ միաս կ'ենին եթէ խաղաղութեան աշխատանքներուն մասնակից չլարանն Ռուսիան: Այս է թուրքական թէլը:

Այսպէս թէ ջախջախ, այսօր կատարւած իրողութիւն է թուրքերոյ մուսաբ Ժրնեւի արեսպագոսին մէջ: Լ. Զ. Պատերազմութեան կողմէ այս առթիւ ներկայացւած ծանօթ յիշատակագիրը բարոյական որոշ աղբջնութիւն ունեցաւ այն իմաստով որ, Հայկական Դասար անդամ մը եւս արժարձեցաւ եւրոպական մամուլին մէջ: Փռւումայ տը փընիւ, փռւումայ, փռւումայ տէ Եթապ և այլ թերթեր համակրանքով արտայայտուեցան մեր մասին: Յիշատակագիրը արձագանգ գտաւ նախ թուրք մամուլին մէջ: Վազրթ, Միլիոյէթ, ձիւմիտ-րիլէթ և այլն գրադէցան անով ու տեսան թէ հակառակ տարր տարիներ անցնելուն, տարազիր Հայերը երբեք չեն մոռցած իրենց Հայրենի հողն ու արդար պահանջները: Թուրք վարիչ շրջանակներուն զրոյսով էր անշուշտ որ «թուրք-հայ կաթոլիկ աշխարհական վարչական ժողովի նախադաշնութիւնը» նամակ մը հաստարակնց Վազրթի մէջ (17 յուլիս), յանուն «հայ կաթոլիկ հաւատարիմ ազգին», դատափետելու համար Լ. Զ. Պատերազմութեան դիմումը Աղգեբու Դաշնակցութեան անդամ պետութիւններուն:

Ներկայ պայմաններուն մէջ, կարելի չէր ասիէ աւելի արդիւնք ձեռք բերել:

Փակիլէ առաջ այս գլուխը, արձանագրենք կարգ մը շրջանակներէ բխած այն լուրը թէ՛ թուրքիս Աղգեբու Դաշնակցութեան մէջ մտնելու առթիւ քաջարձակ պայման գրած է որ երբեք պէտք չէ արժարձի Հայկական Հարցը: Եւ բոլոր անդամները առանց բացառութեան ընդունան են այդ պայմանը: Ահա՛ թէ ինչո՞ւ 43 պետութիւններուն մէջ չգտնուեցաւ մէկը որ երկու խօսք ընէր մեր իրաւունքներուն մասին, որոնք հանրապետարապէս ճանչնան էին Ժրնեւի այդ մարմինի կողմէ, 1920ին, 1921ին և 1924ին: Ո՞վ ժամանակը, ո՞վ բարքը:

Գրտական շարժումներու զսպումը՝ Մոսկուայի, Պարսկաստանի և Իրաքի գործակցութեամբ, ի վերջոյ յանդեցաւ թուրքիսպարսիկ սահմանային համաձայնութեան կնքումին: Երկար տարիներէ ի վեր վէճ կար սահմանի որոշ կէտերու մասին: Վերջին բրտական արտամարտութիւնը ցոյց տաւ, թէ Արարտի շրջանին մէջ կարդ մը ռազմագիտական կէտեր կը գտնուին պարսիկ հողին վրա և շիրտերը կողտարործեն դանոնք՝ թուրքերու դէմ իրենց յարձակման ստեն:

Սահմանային համաձայնագրերը, որ վերջերս կընքւած էր Թուրքիանի մէջ թուրքերոյ և Պարսկաստանի արտարին նախարարներու միջև, վաւերացուեցաւ նախ պարսիկ Մէլլիսին, յունիս 18ին ալ Էնկիլարի Աղգ. Մեծ ժողովին կողմէ: Այս առթիւ պարսիկ թերթերը նոյապատար արտայայտութիւններ ունեցան թուրքիոյ հանդէպ, վեր հանելով երկու դրացի իւրաձ պետութեանց դարաւոր բարեկամութիւնը և ապալային անոնց գործակցութեան ծաղիկը բարեկիր:

Իսկ յունիս 18ին, Էնկիլարի Ռորհրդարանին մէջ, նախ վաւերացուեցաւ թուրքիսպարսիկ համերաշխութեան, դատական կարողութեան և իրաւարարութեան դաշնագիրը: Յետոյ արտաքին գործաւոր թէլ-փիք Քիւշուի կարեւոր յայտարարութիւններ ըրաւ սահմանային համաձայնագրի վաւերացման առթիւ: Վէլյոր մեր պետերացման ներկայացւած դաշնագիրը, ըսաւ, վերջ կը գնէ վէճի մը, որ սխալ հասկացողութեան և իրար շահակալու հետեանքով դարեւի ի վեր գոյութիւն ունէր երկու դրացի պետութեանց միջև: Տարա-

կոյս չկայ թէ երկու երկիրներն ալ իրենց դոյութիւնը պահպանելու համար օրինաւոր իրաւունքներ հետապնդելով հանդէժ այս դաշնագիրը խմբագրեցին շատ անկեղծ, դրացիական, նոյն իսկ եղբայրական միտւորտի մը մէջ: Գործաւորը յետոյ երկարօրէն ծանրացաւ Բոզա շահի բարեկարգած վերաբերումին վրա, բացատրեց երկու երկիրներու միջև կնքւած չեզոքութեան և բարեկամութեան դաշնագիրը, որուն վրա ետեւի աւելցած է պրոտոկոլ մը, որուն առաջին յօրաւածը կը վերաբերի յարձակողական պատերազմի մը պարագային կողմերու բռնելիք դիրքին, իսկ երկրորդ յօդւածով կը նախատեսուի տնտեսական յանձնատնողովի մը կազմութիւնը: Նոյնպէս մշակութային գետնի վրա շիտուներ անդի պիտի ունենան երկու երկիրներու միջև:

Այս նիստին մէջ շատ հետաքրքրական խօսքեր արտասանուեցան Գօճա Էլիի երեսփոխան Սրբաբ պէյի կողմէ, որ այսպէս սխալ էր թուրք Պրիլիի դաշնագրի բացարձակ Օսմ. կայսրութիւնը կը մկրատէր արեւելքէն, հիւսիսէն և հարաւէն, այն ստեն պարսիկ կառավարութեան տւած էր Գոթիւրը: Յետոյ երկու կառավարութեանց միջև վէճի առաքիլայ գարձաւ Եօթը Նակիլէներ կոչւած շրջանը, որ սահմանի հիւսիսէն դէպի հարաւ կերկարէր և շատ կարող էր Անատոլիոյ զաւապանութեան համար: Վերջերս այդ շրջանին մէջ պատահած ցաւալի դէպքերուն հետեանքով ստիպուեցանք բարեւոյս ունենալ մեր կարգ մը հայրենակիցներուն հետ (իմա՛ շիրտերը): Վաւերացուելիք համաձայնագիրը անհա՛ սահմանային այս խնդիրն է որ կը լուծէ:

Սրբաբ պէյ յետոյ կանգ առաւ տնտեսական գործակցութեան վրա և մաղթեց որ շուտով աւարտի շինութիւնը Թարսիլ-Էրզրում-Տրապիզոն խճուղիին, որ առեւտրական մեծ կարեւորութիւն ունի թէ՛ Պարսկաստանի և թէ՛ թուրքիոյ համար: Նոյնպէս թեյագրեց որ երկաթուղիի վերջին կայարան Մարտինէն դէպի միջին Պարսկաստան խճուղիներ շինեն:

«Գալով մշակութային խնդրին, երբեք միտքէս չեմ անցրեր դրացի պետութեան մը ներքին գործերուն մասին խօսիլ, միայն թոյլ տուէք ջանի մը խօսք ըսել: Քանի որ մեր կառավարութեան փտաւաչուք անունն է «թուրք շանրապետութիւն», մենք պարտաւոր ենք հետաքրքրելի բոլոր անոնցով որոնք թուրքերէն կը խօսին և «թուրք են» կրնան: Մինչդեռ կառավարութեան ծրագրին համաձայն «Մեր ազգը ո՛չ մէկ կայա ունի այն զանգաւաններուն հետ, որոնց փաղաքական փայլատաղիքը մերիկէն տարբեր է: Թուրքերու հանդէպ տաք համակրանքով համակրած եմք»:

«Այս խօսքերը քննադատում միտքէս չեմ անցրեր: Պիտի ըսեմ միայն թէ ասիկա կառավարութեան ծրագրերն է, բայց ո՛չ ազգիները:

«Պարսկաստանի մէջ թրքութեան արմատէն մաս մը արմատներ կան: Այնտեղ մեր լեզուն խօսող չորս միլիոն ցեղակիցներ ունինք: Կասկած չկայ թէ Գոթիւրի և Վանի թուրքերը պիտի հետաքրքրուին թէ պարսիկ կառավարութիւնը ի՞նչ դիրք կը ընէ անոնց լեզուին, դրականութեան, ընկերային վիճակին հանդէպ: Մեր պարտականութիւնն է անհրաժեշտ միջոցները ձեռք առնել ուղղակի մեզի հպատակ այս մեծ զանգաւածին մշակոյթը, բարոյականը և ազգային գգացումները քաղաքի վիճակի հասցնելու համար:

«Իրաւմութեան պատճառաւ այնտեղի թուրքերը աւելի շուտ կընան ենթարկել տեղական պայմաններէ: Հետեաբար ուրիշ երկրի մէջ ապրող թուրքի մը դպալումները պահպանելու համար պէտք չտեսնւած բացարձակ միջոցները Պարսկաստանի համար անհրաժեշտ կը նկատեմ, որովհետեւ հոն ձուլումը դիրքին է: Մեծ պարտականութիւն մը կը ծանրանայ մեր վրա: Պարսիկ կառավարութիւնը այս բանը շատ կանուխէն գգաւոր, Պոլսոյ պէս իր հպատակներուն շատ գտնուած մէկ քաղաքին մէջ դպրոց բացած է՝ իր մանուկներու վերջու-

թեան և անոց ազգային զգացումներու պահպանման օժանդակելու համար (Ապիլաքսանը իլամենա) : Նոյն զգացումով մենք ալ Պարսկաստանի մէջ զգրոց մը պէտք է բանանք : Պարսիկները Պոլսոյ մէջ հիւանդանոց մը ունին : Պէտք է՝ որ մենք ալ Պարսկաստանի թրքաշատ մէկ կեդրոնին մէջ հիւանդանոց մը բանալով անոց ցուերը ամբօրէնք : Կը յուսամ թէ շահակեց գործադրութիւնները շուտով կիրազրծեն հիւանդանոցի և զգրոցի այս խնդիրները : Եթէ երմտացոյցի վիճակը առարկէի, կրեմ թէ թարբիղի մէջ քացելիք թուրք զգրոց մը և հիւանդանոց մը շատ աւելի կարեւոր է քան Պոլսոյ կամ Իդմիրի մէջ քացելիք հիւանդանոց մը և զգրոց մը : Ի հարկին պէտք է մարը հայրենիքի կարգ մը ծախքերը կրճատել և այս գործերուն զբաժնատկացնելը :

Սրբի պէյի այս յախուռն արտայայտութիւնները ոչ մէկ մեկնութեան կը կարօտին : Թուրքն է, որ կը փորձէ իր քիթը երկարել մինչև Իրան :

Երեւոյտան մը ապառ է իր ուղած ձեով արտայայտիլ խորհրդարանի բեմէն : Ատիկա իր անձնական կարծիքը կրնայ նկատուիլ : Սակայն Սրբի պէյի պարագային մէջ յատկանշականն այն է, որ անիկա կը մատնէ մտայնութիւն մը, համաթրքական ծրագրի վերաբծարծում, թուրքական երազներու հետապնդում : Ու իր խօսքերը միւս երևախոսաններու ջրմը ծափերուն արժանացած են, ինչ որ կը նշանակէ թէ զաղափարը սերելի է բոլորին :

Փակելու համար այս գլուխն ալ, ստորև կուտանք թէ՛Վֆիք Իււլտի պէյի պատասխանը ազգայնական երևախոսանին .

«Սրբը պէյ մեր կուսակցութեան մէկ յօդածը լինելով, ըստ թէ անիկա կառավարութեան ծրագրին է, քայց ո՛չ ազգինը : Խաբէ կուսակցութեան յենած մեր կառավարութիւնը այն համոզումն ունի, թէ ազգին բարձրանելուն համապատասխան ծրագրի մը պատրաստած է և տարբեր ծրագրի չունի :

Գալով փոքրամասնութեանց հարցին, այդ խնդրին մասին թուրքերոյ տեսակէտը չի պատշաճօր այն տեսակէտներուն, որոնք մերթ ընդ մերթ կը յայտնին Ազգերու Դաշնակցութեան մէջ : Բարձրակարգ պետութեանց հետ մեր կառարած քանակութեանց ընթացքին այն կարակացութեան յանդեցանք թէ, փոքրամասնութեանց

բարօրութիւնը պետութիւններու յարաբերութեանց բարեկամական ընդթիւն հետ կապ ունի : Պուլկարիոյ և Յունաստանի հետ փոքրամասնութեանց խնդիրը բարեկամական յարաբերութիւններով լուծեցինք : Այսուհանդերձ, մենք միշտ զէ՛մ արտայայտած ենք փոքրամասնութեանց դատը քաղաքականութեան ձեւը գործիք դարձնելու դադափարին : Թուրքս երբեք ստոր գործիք չէ եղած և պիտի չըլլայ : Դասն փորձերով սուր վեցանք այս ճշմարտութիւնը : Հետեաբար, մեզի համար փոքրամասնութեանց խնդիրը մարդկային խնդիր մը, քաղաքակրթական խնդիր մըն է :

«Մուսթաֆա Քեմալի թուրքերոյ մասնայատկութիւններէն մէկն ալ այն է, որ ոչ մէկ տարբերութիւն կայ անոր ներքին և արտաքին քաղաքականութիւններուն միջև : Քեմալի թուրքիան երկրին ներսն ալ ազգայնական է, դուրսն ալ ազգայնական է : Հետեաբար, մեր ամբողջ սրտով կր փափաքինք մեզի բարեկամ պետութիւններու ազգային զարգացումը և կընդունինք թէ անոնք ալ իրաւունք ունին մեզի պէս մտածելու : Քեմալի թուրքիան ազգայնականութեան իտալիկ շատ յատկանշական ներկայացուցիչն է, զերթէ անոր խորհրդանիշը : Անշուշտ մեր պարտականութիւնն է արտասահմանի մեր հայրենակիցներուն հանդէպ ունեցած կապերը պահել և պաշտպանել անոց ստուղջութիւնը : Միայն թէ Սրբի պէյի ըմբռնած ձեով չենք կրնար թուրքերոյ սահմաններուն մէջ դռնուղ հայրենակիցներուն հանդէպ զործազրուող միջոցներէն տարբեր միջոցներ կիրարկել արտասահմանի մեր հայրենակիցներուն պաշտպանութեան համար : Ներկայիս արդէն թուրք բժիշկ մը կայ Թեհրանի մէջ, քայց մեր հայրենակիցներուն թիւը այնքան շատ է՞ դեռ — պահանջած հաստատութիւնները հիմնելու ստիպարարք : Մաղթենք որ մեր հայրենակիցներու թիւն ալ շատին բարեկամ Պարսկաստանի մէջ, որպէսզի մենք ալ անոց օրինակին հետեւելով Պարսկաստանի մէջ նման հիմնարկութիւններ ունենանք : Այն ստեղծ կառավարութիւնը ո՛չ մէկ զոհողութեան առի՛կ կանգ պիտի առնէ՛ Ազգ-Մեծ ժողովի նման բարձրանքերը իրագործելու համար» :

Այս ճառէն վերջը, վաւերացեցեալ թուրքեկարտիկ համաձայնագրի բնութեանը :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

Կ Ա Ր Մ Ի Ր Գ Ծ Ի Յ Ն Ե Ր Ս

Այս անգամ էլ սահմանափակելու ենք միայն Հայաստանով : Խորհրդ. Միութեան և Անդրկովկասի կանչում առանձնայատկապէս աչքի ընկնող զէպքեր չկան : Հայաստանում նկատուած երևոյթներն էլ զլիսաւորապէս անդրադարձումն են Ռուսաստանում և Կովկասում տեղի ունեցածի : Հայաստանի կենսաբան ծանօթագրողը, ըստ էութեան, զազգաբար կը կարգէ և խորհրդային միւս երկրներում անցած-դարձածների մասին : Նոյն փառտերը՝ միայն տարբեր չափերով և անուններով — բերքահաւաք, անասնաբուսաբույս, ճեղքածները, « յիպոփոսական օրինականութիւն », կրտսնախական առևտուր :

Առանձնապէս արձանագրելիքը սովի ուրականն է Ռւկայիայի և Մերձորդեան շրջաններում : Հարիւր

հազարաւոր բարձրութիւններ թողած տուն-տեղ՝ հեռանում են ուրիշ վայրեր մի կտոր հաց գտնելու յուսով : Հոսանքի ծայրը հասել է և Հայաստան : Հետաքրքրական է և կրտսնախական առևտրի զարգացման ընթացքը. արդէն չարաչառութիւնը դարձել է սովորական երևոյթ, և դատասխապութիւնը հանդէպ է եկել յանցաւորներին պատժելու համար : Թէև օրէնքով միջնորդաւորաւորը արգելած է, քայց փաստօրէն հաւաքական կազմակերպութիւնները և թէ անհատ-մասնաւորները գրադարձ են գնելով և վաճառելով : Մի տեսակ նոր ճեղքմանը դասակարգ է առաջ գալիս, որ շատ պարզ է օգտագործել բացող պատահութիւններ և հարստանալ : Հայաստանում այս երևոյթը դեռ չի չեղում : Հայաստանի կենսա, անցեալ անսարքանում էլ

ամբողջապէս բնորոշում է մանր-ստորեայ խնդիրներով, որոնց առաջին շարքում պէտք է համարել ընթերցանաւոր: Ստոր և հացահատիկները հասկն են: Ըստ Հայկումկուսի կենտրոնի Բիւրօր յուլիս 13 որոշման այս ամսու հաւաքելու է 338,928 հեկտար հացահատիկ, որից 9940 հեկտար խորհրդանութիւններում, 126,934 հեկտ. կորիտեստութիւններում և 202,054 հեկտ. անհատական տնտեսութիւններում:

Սակայն, ոչ կատարութիւնը, ոչ էլ կորիտեստութիւնները պատրաստ չեն այդ բերքը հաւաքելու: Վերջն ասում, վկայում է Հայկումկուսի քարտուղար Սանջուար յուլիս 20ին, բերքահատիկներ թէ նախապատրաստումը և թէ ընթացքն ընդհանուր ամսամբ թոյլ է, իսկ մի շարք շրջաններում բացարձակապէս անբարար... Մինչև այժմ մեր ունեցած տեխնիկը վկայում են բերքահատիկ աշխատանքների բալլընիկիան կադրակիրը մանրաբարար աստիճանի մասին գրեթէ բոլոր շրջաններում: Դեռ չեն վերջանել բերքահատալի մեքենաների նորոգման աշխատանքները: Երևանում և շրջանային կենտրոններում կուտակած են մնում մեծ քանակութեան գիւղատնտեսական գործիքներ, որոնց սուր կարիքն պատճառն են կորիտեստականներն ու գիւղերը: (ՁՊ. Հ.՝ 20 յուլ.):

Սանջուարի նոյն ճանից իմանում ենք յետին թույլ կատարում խոտոտմանութիւն: «Պարտնի չէ, որ անցած ամի տարի մեր կորիտեստութիւնները և խորհրդանութիւնները վատորէ աշխատանքի և անկազմակերպ աշխատանքներում, բերքը հաւաքելիս, հսկայական կորուստներ տւին»: Անցեալ տարի, սակայն, այդ մասին լուսւ էին... «գաղափար» էր:

Որպէսզի անցեալ տարւայ պատմութիւնը չկրկնուի Սանջուարի, առանձին հրամանագրով պահանջում է կուտակումների քարտուղարներից և շրջագործկումների նախագահներից անյայտ վերացնել «անցեալ տարիների խոտահար կամպանիաների այն թերութիւնները, որոնք պատճառ դարձան կերի գլխի կորուստների», և կորուստի միջոցներով ապահովել յարթանակը ճանապարհուծութեան կերի բազայի համար մղող պայքարի ամենապատասխանատու և վճարական ճակատամարտում» (ՁՊ. Հ.՝ 16 յուլ.): Իսկ Հայկումկուսի կենտրոնի Բիւրօն նոյնքան վճարական որոշում է և մանրամասն հրահանգներ է տուել հացարդայների բերքահատիկ կամպանիայի իրականացման համար: (ՁՊ. Հ.՝ 18 յուլ.):

Եւ մինչ այսպիսի որոշումներ ու հրամաններ են տրուում, անդին արդէն խոտն ու հացարդայներ սկսել են փչանալ: «Մարդաբազայի խորհրդային տնտեսութեան մէջ, հեռագրում են «Ջարեմ վաստակային յուլ. 14ին, հացարդայներ արդէն հասել են, բայց չեն հասաւում, որովհետև հնձորների չկան»: Արարանի, Ախտայի, Ստեփանականի, Աղբարայի, Երբ-Բայաղէտի, Մարտունու, Ղարաքիլիսայի շրջաններում խոտը փչանում է, որովհետև գերանդի և հնձող մեքենայ չկայ, իսկ «Երևանի պահանջներում թափած են հացարուր գերանդիներ», կամ Ջաքսիխոսնայի պահանջներում վեր են ընկած հարեւարուր հնձող մեքենաներ ու ձիաքաշ փոյակեր:

Բերքահատաւոր այնքան է դրադեցնում բուլեիկներին, որ մի առ ժամանակ նոյն իսկ քաւքալի ճակատը յետին կարգն է անցել, այնինչ բարակի գործն էլ փայլուն չէ:

Հայկումկուսի կենտրոնի և կենտր. վերահսկիչ Յանձնաժողովի միացումը նիստի որոշումներից իմանում ենք, որ փոխանակ որոշած 30,000ի այս տարի ցանկել է 28,000 հեկտար քամբակ: Ղամարուկի շրջանը թերակատարել է 10000 հեկտար, էմիթայինը՝ 400 և այլն: Բամբակի արտերի պարարտացման և արաթի գործը նոյնպէս թերակատարել է: «Մասնաւորապէս համարեալ լիովին առաջաւել է արակոտրային ցանքը»: «Թոյլ է ընթանում մշակման կամպանիան». քաղհանը

նշանակած ժամանակին չի աւարտում: «Անթոյլատրելի չափով յետ է մնում նստրաբուրը»: «Առանձնապէս յետ է մնում ոռոգումը»: Մի շարք գիւղերում «գոտում կայ արդէն այժմ իսկ անմշակ թողնելու ցան-ած հողամասերի մի մասը»: «Բաւականաչափ չէ ծաւալել աշխատանքը վնասատուների դէմ պայքար նախապատրաստելու ապարդիւցում, բացակայում է գիւղերգրերիկայ ոռոգումը, միջոցներ ձեռք չեն առնել վերջնականապէս վերացնելու դիմադրութիւնը և այլն» (ՁՊ. Հ.՝ 4 յուլ.):

Բամբակին առանձնապէս սպառնում է չոռ հրանդութիւնը, որով բռնւած են շատ արտեր: «Վեդու, Ղուրդուղուր, Ղամարուկի և Վաղարշապատի շրջանների մի շարք գիւղերում բամբակենի վարակում է չոռով, որ անարգել սկսում է տարածուի մի գիւղից միւրը»: «Միայն Ղամարուկի շրջանում ամբողջ 1730 հեկտար վարակւած է չոռով»: Այդ աւերիչ հրանդութեան դէմ մինչև յուլիս 15 ոչ մի պայքար չէր սկսուած. բամբակի բերքը ենթակայ է լուրջ վտանգի: (ՁՊ. Հ.՝ 15 յուլ.):

Լուրջ վտանգ է սպառնում և Հայաստանի անասնաբուժութեան: Հայկումկուսի կենտրոնի և կենտր. վեր. Յանձնաժողովի վերջին միացեալ նիստի բանաձեւը հաստատում է, որ «վերջին տարիները նագում է անասունների ընդհանուր թիւը Հայաստանում, որպէս արդիւնք այն հանդամանք, որ անասնաբուծութեան սոցիալիստական վերակառուցմանը կատարել դիմադրութիւն ցոյց տուող կուլակութիւնը, ինչպէս և կուլակային ագիտացիայի աղիցցութեան տակ ընկած առանձին գիւղացիներ յետամուտ խաւերը գիւշտուլ կերպով մորթում են անասուններին: Դրա պատճառն են գիւղացիական հարցում կատարած քաղաքական սխալները»: «Անցած ձմեռ առանձնապէս բարձր է եղել առանձնների, մանաւանդ ջահել անասունների կոտորման տոկոսը խորհրդանութիւններում, կորիտեստութիւններում և անհատական հաստածում»:

Եւ «չնայած, որ Հայաստանի սոցիալիստական տնտեսարուծութեան զարգացման համար կան բացառիկ նպատաւոր պայմաններ», բանաձեւը թուում է բազմաթիւ «խոշոր թերութիւններ», որոնք հաստատում են, որ, իրօք, Հայաստանի անասունները ենթարկւած են անխնայ կոտորածի ու փչացման, մանաւանդ, խորհրդային և հաւաքական տնտեսութիւնների մէջ: Յիշենք «թերութիւններից» մի քանիսը. «մեծ տոկոս է կազմում անասունների, մանաւանդ ջահել անասունների կոտորումը, բարձր է անասունների ամուլութեան տոկոսը... Հօշը բաւականաչափ չի ապահովւած կոշտ ու հիւթիլի կերով, վատ են օգտագործուած արտասփայլերն ու մարգալետները, ցածր է անասունների մթերատուութիւնը» և այլն. (ՁՊ. Հ.՝ 2 յուլ.):

Իսկ թէ այս «թերութիւններն» ինչպէս են արտոյայտուած կենցեղում, առաջ բերենք միայն մի քանի պատահական օրինակներ: Արբարայի խորհրդանութեան մէջ «անասուններից լաւ չեն խնամում: Իժ. Ջաքսեանը արտասահմանից 10,000 բուրլով դնւած աղ-նացեղ ցուլին գետին է խախտել զիժը ծակելու համար. ցուլը սատկում է, իսկ բոլորը մնում է անպատիօք»: «Գոտայքի շրջանի Աւանի գիւղերական խորհրդանութեան ոչխարից 10ը դաշկեր են կերել, 36ն էլ զաշտում կորել են: Կանխաւոր ինամբի, արողջապահական նպատաւոր պայմանների բացակայութեան հետեւանքով սատկել է 25 խող... Ամիսներով գոմերը չեն մարբուում... Անտարբեր ու յայնպագործ վերաբերմունքն այն աստիճանի է հասել, որ լուծեւ ամբողջ գիւղը մնում է եղների վրին և ոչ ոք այդ մասին չի մտածում... 100 հեկտար բանջարեղէն մնացել է առանց քաղհանի, 140 հեկտար բանջարեղէն և սիլոսային կուլտուրաները մնացել են անմշուր և չորանում են... Տիրում է բանուծի հոտուծութիւն. 4 ամսում մօտ 1000 բանուր,

եկել է խորհանուստութիւն և գնացելը: (ՁՊ. 2.՝ 15 յուլիս):

«Ալագեազ» ոչխարաբուծական խորհանուստութեան մէջ «մէկ զիւրեայ ընթացքում ստակել է 151 ոչխար՝ ստեղծութեան վրաս հասցնելով 15,000 բրբրի»: (ՁՊ. 2.՝ 6 յուլիս):

Միայն անասունները չէ որ վնասուեալ են: Ամուսնուսովալարութիւնը ընդհանուր երևոյթ է: Ահա «Անասունաւած» կողմեստեղծութիւնը. «կատարած ցանրի մշակման գործը գնանուեալ է խալտարակ գրութեան մէջ: 200 հեկտար աղիին դեռ մինչև այժմ չի մշակուած. հետևանքը եղև է այն, որ աղու բերքը 50% պակաս է լինելու... Զափազանց աննեղելի գրութեան մէջ է բամբակի մշակումը: Այսօր 100 հեկտարեց աւելի բամբակի բերքաբուծութիւնը հարցականի տակ է»: (ՁՊ. 2.՝ 9 յուլիս):

Լենինականի բանտարակն շրջանում «Տաղազիւտ զէպքեր են լինում, որ ստացած մրգեղէնը 70-80% ուժ փառցած չլինի»: Այսպէս, յուլիս 2ին Քուրթախից Լենինական բերում է 50 արկղ տանձ, 31 արկղ սարկ, 79 արկղ կեռաս, 2 արկղ վարունգ, 10 արկղ խնձոր, 51 արկղ դեղձ: «Լենինականում երբ վառոնը բաց են անում ապրանքները տէրերին սալու, պարզուած է հետևելալը. կեռասը, դեղձը, վարունգը բոլորովին փառցած են դուրս գալիս — 100 տոկոսով, տանձը փառցած է լինում 10% ուժ, սալորը՝ 25% ուժ: Նոյնպէս և 30 արկղ դեղ, որ հասցեագրուած էր Երեւան՝ Հացբանջարապտուղին, 100% ուժ փառցած լինելու պատճառով, ալ ևս չի ուղարկուած, այլ հէնց Լենինականում թափուած է»: «Նման փաստարութեան հաւասարազօր զէպքեր շատ են կատարուած», մեղավորները նկատուած է ձեռքըրգային Հայաստանը (10 յուլ.):

Եւ, իրօք, նման զէպքեր շատ են պատահում. «Յունիս 2ին, Լենինականի պտուղ-բանջարեղէնի վարչութեան հասցեով ստացած մի վազոն դեղձը, 18 փամ Լենինականում անտեղի կանգնելու հետևանքով, համարեա ամբողջովին փռանում է: Վերջերս Ռուսաստանից ուղարկուած 2 վազոն գետնահինձորը կայարանում այնքան է մոռցել, որ մինչև Լենինական հասնելը 100 տոկոսով անպէտքացել է: Յաճախ, ստացած բեռները կայարանում և ապրանքային բակերում կորչում են... Մի քանի օր ստաջ, Երեւանի քաղաքային կայարանի ապրանքային բակում ցերեկով գողանում են 6-7 կոնեակի տակառ: Լենինականի պտուղ-բանջարեղէնի վարչութեան հասցեով յունիս 10ին Սամորեղի կայարանից ուղարկուել է 100 արկղ միրգ, որը մինչև օրս (6 յուլիս) դեռ չի ստացուած և ճանապարհին ամբողջովին փռացել է»: (ՁՊ. 2.՝ 6 յուլ.):

Նոյն Լենինականի կայարանում «յուլիս 5ին բոլորովին փռացել է 2 արկղ կեռաս, 26 արկղ դեղձ և 2 արկղ ծիրան»: Մի ուրիշ վազոն «բառալուց յետոյ, պարզուած է, որ վառոնում եղած 20 արկղ դեղձը, 5 արկղ ծիրանը, 17 արկղ սալորը, 4 արկղ տանձը, 2 արկղ կեռասը և մի շաքար այլ մրգերի մեծ մասը փառացել է»: Մնացած մասն էլ, որ ճանապարհին մնացել էր անարատ, «փռանում է Լենինականում»: (ՁՊ. 2.՝ 16 յուլիս):

Այսպիսի «խալտարակ» փաստեր բազմաթիւ են խորհրդային իրականութեան մէջ: Մրան ստում են՝ «սոցիալիզմ ենք կատարում»...

Ի՞նչ է արւում այս համատարած աւեր ու փռացումը դէմ: Վերջերս խորհրդային մամուլում շատ են իրօսուած «լենինական օրինակահանութեան» մասին: Համամիութենական կենտրոններում և Ժողովուրդի յունիս 25ի յատուկ որոշումը «պայտառուստանից կողմից յեղափոխական օրինակահանութիւնը խախտելու» և ապօրինութիւնների ու յեղծումների դէմ միջոցներ անելու մասին ուղարկութեան տարակայ է և Հայաստանում: Հայկենտգործկոմը նոյն իսկ որոշում հանեց. «ՁՄՄ կառավարութեան յունիս 25 որոշման կենսագործման միջոցառումների մասին»: Վերջին հաշուով այդ «միջոցառումները» նպատակ ունին պայքարել և ճանաչողութեան օրինակահանութեան դէմ, բայց մինչև այժմ դեռ շօշափելի արդիւնք չկայ մէջոցեր. «խալտարակ» զէպքերը յարաճուն զարգանում են:

Վերջին ամառընայի այլ երկուքներին արձանագրեց Հայկուկուսի կենտրոնի և կենտր. Վերահսկիչ Յանձնաժողովի միացեալ նիստեր յունիս 24-27ին, ուր բնութեան անուեցին և բանաձևեր հանուեցին Հայաստանի պղծմարդիւնաբերութեան, բամբակի ցանրի արդիւնքների, անասնապահութեան դարգացման միջոցների, կրօնաւատական առեւտրի և կուսակցական աշխատանքների մասին: Երպիսիպիսի նիստում երկար ու տժգոյն ճառ իօսեց Հայկուկուսի քարտուղար Կանաչեանը:

Յունիս 25ին աւարուեց, վերջապէս, Դևերի ոռոգման ստաջին հերթի ծրագիրը, որով ոռոգուելու է 3000 հեկտար: Այդ առթիւ Երեւանում տեղի ունեցան Ժողովներ ու հանդէսներ: Հարուածային աշխատարձերը պարգևատրուեցին «աշխատանքի դրօշով»: Ջրանցքը կոչեց Ստալինի անունով: Պաշտական երգիչ Ե. Զարեանցը հրատարակեց «Դևերի ստաջին յաղթանակի առթիւ՝ ներքով հարուածայիններին»...

Յունիս 9ին Երեւանում տեղի ունեցաւ կոյրերի համաժողովարը: Հայաստանի կոյրերի համաժողովարը կազմակերպուել է 1931թ. և ունի 5 բաժանմունք 1200 անդամներով, որոնցից 800ը աշխատանքի ընդունակ են: Համաժողովարը, ի միջի այլոց, դանդաղ յայտնեց, որ կրթական գործակալութիւնը մինչև այժմ կոյրերի համար ոչ մի դպրոց չի բացել և որոշեց առանձին ուղարկութիւն պարձնել կոյրերի մտաւոր դարգացման և տեսնական ապահովութեան վրա:

Երեւանում լոյս տեսաւ պրոֆ. Մաչատրեանի կազմած Իրիւնի լիւրի գերականութիւնը՝ տպւած յատիւներէն տառերով: Գիրքը բաղկացած է մօտ 150 էջից և յատկացած է ուսուցչիներին և մանկավարժանոցի ուսանողներին գործածութեան: Պատրաստուած է նաև քերթ-հայերէն բառարան պրոֆ. Մաչատրեանի և Լափանցեանի խմբագրութեամբ: Տպագրուած են և քրթղերէն դասարբեր Հայաստանի, Արրեջնայի և Վրաստանի քերթղերի համար:

«ԲԱՐԻ ԴԱՐԸ» ԹԻԻՐԻ ԳԻՒՂՈՒՄ

Փոքրիկ յայտարարմանը առաջ եկեալ խորհրդանունագէտ և Մերձաւոր Արեւիքի տնտեսական գործերի մասնագէտ Կ. Զարիբի մէկ յորածք թիւրքական գիւղի արդի վիճակի մասին: Հալառակ իրենց զեմք թիւրքախաւրքեան, բոլշեակներն էլ ստիպած են արձանագրել Թիւրքիայի ներքին պայմանները մտայն պատկերը, համարեն՝ նոյն գոյներով, ինչ գոյներով ներկայացուած է մեր մամուլի կողմից: Մի աւելորդ ապացոյց, որ մենք միշտ եմք տեսնում Թիւրքիայի կեանքը:

Վերջին վիճակագրութեան համաձայն, Թիւրքիայի մշակիչ հողերի մեծ մասը (93%) գտնուած է վահլըֆներէ և երկրագործութեամբ զբաղող ազգայնակուրթեան 17% զ կազմող կալւածատէրերի ձեռքին: Հողի մնացած 7% ը բաժին է հասնում գիւղական բնակչութեան 83% ին: Ինչ վերաբերում է կենտրոնական Անատոլիին, բոլոր մշակիչ հողերի 55% զ գտնուած է ընդհանուր բնակչութեան միայն 10% կազմող կալւածատէրերի ու հարուստ գիւղացիներէ ձեռքը: Այսատուոր գիւղացու հողարածինը, միջին հաշուով, կէսից մէկ հեկտար է:

Նոյն վիճակագրութեամբ գիւղական ընտանիքների ընդհանուր թիւի 20% ը բոլորովին գուրկ է արտագրութեան գործիքներին և ստիպւած է օգուել կալւածատէրերի միջոցներին: Գիւղացիների մեծ մասը մինչև այսօր էլ ախառուած է խիտ նախնական գործիքներով: Տրակտորների ընդհանուր թիւը 3 Ն հարաբից աւելի չէ: Առանկան-կալւածատիրական կարգերը մի կողմից, վարձակալութեան ու վարձի վաշխառուական պայմանները խիտ արագացրել են Թիւրք գիւղացիութեան աղքատացումն ու ընչաբարկուծ է անջան ատանտութիւններին մէջ արագակցող մեքենաներ բանեցնելը դարձել է անձեռնառու: Դրանով պէտք է բացատրել, որ երկրագործական մեքենաների ներածումը տարէլ տարի պակասում է և 1931 թիւն հաւասար էր 1,517 տոնի (778,000 լիրա արժէքով) ընդդէմ 1929թ. 3,040 տոնի (1,841,000 լիրա) և 1927թ. 4,749 տոնի (1,946,000 լիրա):

Ինչպէս յայտնի է, Թիւրքիայի մշակիչ հողերը կազմում են 722,6 հազար թուրքական կիլոմետր ընդհանուր տարածութեան միայն 9% ը և այս հողերի լուսագոյն մասը գտնուած է կալւածատէրերի և հարուստների ձեռքը: Թիւրք գիւղացիութեան լայն զանգվածներին բաժին են ընկնում պակաս արգաւանգ հողերը, որոնք հետզհետէ ուժաբասկի են լինում շնորհիւ այն բանի, որ տաւարի պահառութեան պատճառով (3,415 հազար զլուխ, կամ 2 հեկտարիւն 1.5 զլուխ) արտերը շատ քիչ շափով են պարարտացում: Թիւրք գիւղը հանքային պարարտանիւթերին ծանօթ չէ, իսկ անասունի արդով պարարտացնելու համար, սովորաբար, 2 հեկտար հողին պահանջուած է 5-6 զլուխ. թկան: Գիւղացիական արտերի մեծ մասի ամենաշարժող բերքը համարւում է մէկից մէկ, իսկ աւելի յաճախ՝ մէկին չորս ու մէկին երեք:

Թիւրք գիւղացիութեան ներկայ անմխիթար վիճակը, սակաւահողութիւնը, գործիքների պակասից ու հողի աղքատութիւնից դատ, աւելի է մտայնութիւնը աւելի, որոգման միջոցների բացակայութիւնից և այլն: Եթէ ի նկատի ունենանք, որ Թիւրք գիւղատնտեսութեան տարեկան ընդհանուր արդիւնքը հասնում է

մօտ 337 միլիոն լիրայի և այս գումարը բաժանենք երկրագործութեամբ պարապող ընտանիքների ընդհանուր թիւի վրա (մօտ 1,75 միլիոն ընտանիք), գիւղացիական ընտանիքի միջին հասոյթը պէտք է հաշուենք 192 լիրա: Իսկ Պոլսի Արեւարական Սենեակի տեսչներով, Հինգ հողուց բաղկացած գիւղացիական մի ընտանիքի տարեկան բերդը 1931թ. կազմում էր 1,615 լիրա: Գալով Արեւելեան Անատոլիին, «Հաքիմիէթ-Մուրիէ» Թերթի տեսչներով, Բալիքէսքրի գաւառում 1931թ., երբ բերքը մէկին մէկ էր, երկու հեկտար հողի մշակութիւնը նստում էր 1020 զլուռ, իսկ հասոյթը՝ 820 զլուռ: Ասել է, երկու հեկտար հողի մշակութիւնից ստացւում էր 200 զլուռ միայն:

Բնատուրքի՝ աշարի վերացումը Թիւրք գիւղացիութիւնը մտնեցնելով շուկային՝ առաջ բերեց մի շարք նոր դժուարութիւններ և, ստալին հերթին, վարկի սուր կարիք: Երկրագործական Դրամատան (Զիրաաթ Բանկայի) կազմակերպումը ոչ մի օգուտ չուեց գիւղացիական լայն զանգվածներին, որովհետև վարկի պայմանները, որոնք պահանջում էին երաշխաւորութեան համար ներկայացնել գոյք, զբոլում էին աղքատ ու միջակ գիւղացիական խաւերը օգուտելու հնարաւորութիւնից: Եթէ երբեմն նրանց բաժին էին հասնում վարկի փչբանքներ, վճարման ժամանակը հասնելուս՝ նրանց սպառնում էր կատարել քայքայում, որովհետև քանակը ամենադժան վերաբերում էր ցոյց տալիս զէպի ժամանակին չվճարող գիւղացիները և մերժում էր վճարման յետաձգումը:

Գիւղացիութեան վիճակը չիթիւկացրեց և գիւղատնտեսական կօօսերատիւները կազմակերպումը (1929 թիւ), որովհետև նրանք լայն արտօնութիւններ են տալիս կալւածատէրերին և ունենոր հողագործներին՝ ի միտս աղքատ գիւղացիութեան: Ամենադժուար կօօսերատիւները բաղկացած են բացառապէս հարուստներին: «Ջումհուրիէթ» չի ծածկում, որ երկրագործական վարկը իր հիմնական մասով ընկնում է վաշխառուների և առևտրականների ձեռքը: Իսկ վերջիններս գիւղացիներին դրամ են փոխ տալիս վաշխառուական տոկոսներով, որոնց չափը 1932թ. սկզբին, «Բէպիւր-լիկ» Թերթի տեսչով, տասանութ էր 60ի և 120ի միջև:

«Վարկից գուրկ և պարտքերի մէջ խրած Թիւրք երկրագործը ոտքով-չլիտով ընկնում է գիւղացիական վաշխառուի ձեռքը թէ արդենարեւակաւ ապրանքներ զնէլիս և թէ սեփական միջոցները ծախելիս: Ինքը ծախում է զեռ շնձուած, ոչինչ գնով», գրում է կառավարական «Ջումհուրիէթ»:

Երկրագործական տնտեսութեան շահաւէտ շինելը մի կողմից, պետութեան դրած բազմապիսի հարկերն ու տուրքերը միւս՝ անտանելի դրութիւն են ստեղծել Թիւրք գիւղացիութեան համար:

Թիւրքիայի հարկային դրութիւնը զննելով՝ տեսնում ենք, որ պետական բերդը միայն 20% ը գոյաւում է ուղղակի հարկերից, իսկ 80% ը անուղղակի հարկերից, որոնք իրենց բովանդակ ծանրութեամբ ընկնում են Թիւրք գիւղացիութեան լայն խաւերի վրա: «Աղդարնակութեան վճարած հարկերը հասել են վճարունակութեան ամենաբարձր կէտին», ստացւում է թ փաշան դեռ 1930ին, Անգորայի իրաւարանական վարժարանի ժողովում: Այն ինչ, այն ժամանակ մէկ օրա ցորենը արժէր 16 զլուռ, մինչ 1932թ. մէկ օրան արժէր միայն 2,5 զլուռ: Նոյն համեմատութիւնն ունէին և չամիչի գները՝ 61 և 49 զլուռ, թուզի՝ 47 և

28, բամբակի՝ 96 և 44 և այլն: Այսօր թիւրք գիւղացիութիւնը վճարունակութիւնն էլ աւելի ընկած է:

Բայց և այնպէս, Հարկերն ու տուրքերը թէթեւացած չեն: Մինչև այժմ տարեկան մարդ զլուխ հասնում է 13 լիբա հարկ ու տուրք, 1921թ. 5.7 լիբայի փոխարէն: Ճիշտ է, 1930թ. աւելի շատ էր. մարդ զլուխ ընկնում էր 16 լիբա, բայց վերջին երկու տարին թիւրք գիւղացիութեան վճարունակութիւնն այնքան է ընկել, որ հարկային մեքենայի ճնշումն այլ ես ոչ մի արդիւնք չի տալիս: Այսպէս, 1931թ. պետական բիւջէի բացը 20 միլիոն էր կամ մօտ 15%: Ապրուստի ընդհանուր արժէքը 1931թ. հաշուում էր 1,176 լիբա, 1913-14 թւի 100ի փոխարէն: Ամենից թանգ են արդիւնաբերական ապրանքները, ամենից ատանձ գիւղատնտեսական սպառողական մթերքները: Ապացոյց, թէ գիւղը ենթակայ է շահագործման ր

Թիւրքիայի նոր տնտեսական ծրագիրը, որ Ըսմէթ փաշայի անմիջական մասնակցութեամբ կազմեց յատուկ յանձնաժողովի ձեռքով, 1930ին, վերաբերում է երկրագործական վարկային խնդիրներին, երկրագործական բանկի դրամադրիի յաւելման և այլն, բայց ոչինչ չի ստում հոգից օգուտելու պայմանների, հողային բարենորոգումների և այլնի մասին, այսինքն՝ այն ամենի, որ այնպէս յուզում է թիւրք գիւղացիութեան հիմնական դանգաճը: Բացի այդ, մշակած ծրագրի իրականացման համար խոշոր միջոցներ են պահանջուում, որ թիւրքիան չունի: Երկրագործական մթերքները զենքը ընկել են ահաւոր չափերով և արտածումը խիտ պակասում է (ծխախոտի արտածումը 1931թ. 29 հազար տոն էր 1930ի 43 հազարի գիծաց, բամբակի՝ 6 հազար տոն 16.6 հազարի դիմաց, հաշիշը՝ 2.8 հազար տոն 3.4 հազարի դիմաց և այլն): Միայնուրի 1931 թւի բերքը ծախելու անջան գնով (5-6 անգամ աւելի ատանքան անցեալ տարւան) և դեռ գիւղացիների ձեռքը մնացել է աւելի քան 30 միլիոն լիբայի ծխախոտ:

Երկրագործական ապրանքների պահանջի անկումը համաշխարհային և ներքին շուկաներում առաջ բերեց

ցանքի իրիտ կրճատում: Եթէ 1927թ. ցանւած տարածութիւնը հասաւար էր 4,745 հազար հեկտարի, 1930ին արդէն ընկել էր 2,330 հազարի, իսկ 1931ին՝ 25% ու պակաս նախընթաց տարւայ համեմատութեամբ: Նման տաղնադի հետևանքով թիւրք գիւղի վիճակը դարձաւ չափաքան ծանր: Մի բան, որ չի ծածկում և թիւրք մամուլը:

«Գիւրքը մութին ճամբայ կտրելով՝ դուք չէք նկատում, որ արդէն գիւղ էք մտել և ուղիղ տուն էք ընկնում... Գիւղացին, նրա կինը, զաւակները, եղինքն ու հւսերը հաւաքւած են միատեղ աթարի դարչահոտութեան մէջ»: («Ազգամ»):

«Միւր հազարգիւտ կերակրող է, գիւղացին տարեկան 2 անգամ է միս ուտում... Անատոլից գիւղը մինչև օրս էլ բնատնտեսական շրջանում է ապրում: Նրա մշակութային մակարդակը համապատասխան է կիրառած արտադրութեան գործիքների աստիճանին... Անատոլիայում շկան «փիրուզէ-կանայ» հովիտներ, որոնք դոյութիւն ունին միայն բանաստեղծների երեակալութեան մէջ: Իր գերմարդկային աշխատանքի փոխարէն գիւղացին ստանում է ցանւած սերմի հազիւ 4-5ապաւտիկը... Պէտք է ասել, որ անատոլիցի գիւղացին ողջ տարին ձր է աշխատում... Եթէ գիւղացին գիւղ ջարէ կենանքի աստիճանին չի հասել, պատճառը այն է, որ օգուտը է անատուններից: Սակայն, մեր տաւարի վիճակը նոյնքան ահաւոր է, որքան և նրա տիրոջ՝ գիւղացու վիճակը... Գիւղի մեծագոյն ցար վաշխառութիւնն է, որ անկաշկանդ շահագործում է արտադրող գիւղացուն»: («Հաքիմիէթ-Միլի»):

Ազգատ գիւղացիութեան սեփականազգրկումը մանր գիւղացիութեան ստրկացումն ու շահագործումը դարձանում է գիւղի վերջի խաւերի բարեկեցութեան աճման զուգընթաց: Կալաւածատէրը և ունեւոր գիւղացին հարստանում են: Թիւրք գիւղացիութիւնը դանգաճած է, ինչպէս ասում է թիւրք պաշտօնակիցները, ընկնում է «բարէ դարի» աստիճանին:

Դ. ԱՄԻՐԻՆԻ

Մ Ե Ր Զ Ո Ն Ե Ր Ը

ՀԱՅՐԻԿ ՏԵՐ ԱՍՐԳՍԵԱՆ

Հայրիկը Պարսկաստանի Ուրմիա Նախիվեան թէփէ գիւղացի լաւ բնտանիքի զաւակ էր: Իր ծնողներն ու բարեկամները առաջինն են լինում, որ գրկաբաց ընդունում են Հ. Յ. Դաշնակցութեան անդրանիկ քարոզիչներին, նեցուկ դառնալով աշակցում և ուժեղացնում են կազմակերպիչները իրենց գիւղում և շրջաններում: Աւրիլյան շրջանում Նախիվեան թէփէին Դաշնակցութեան լաւ օրբաններէից է համարել: Հայրիկը դեռ փոքրեց պաշտում էր անձնուէր յեղափոխականներին, որոնց ազդեցութեան տակ գաւառիարակեց և կազմակերպւեց նրա բնաւորութիւնը:

1914ի պատերազմին Ուրմիան էլ ենթարկւեց սաճկական բարբարոսութիւններին. երկու անգամ գաղթեց Խոյ-Ջուլֆա ու կրկին վերաբնակեց Ուրմիա՝ Փիղիքաբաղոս, ներթապէս և կուսակցականապէս քայքայւած վիճակում: Պէտք էր կազմակերպել, կապ ստեղծել շրջանների հետ և կրթական գործը վերականգնել: 1916

թւին դաշնակցական մի գործիչ անցաւ Նաղուշայի շրջանը՝ ստաջին հերթին մտնելով Նախիվեան թէփէ: Երկուստարդ Հայրիկը գրկաբաց ընդունեց նրան և առաջնորդեց իրենց տունը և մանրամասն տեղեկութիւններ տալով՝ աջակցեց նրան վերակազմելու շրջանը:

Հայրիկը Չեմեռանդ կերպով ներկած էր կուսակցական գործին. նա ազդի և Դաշնակցութեան ներկած ծառան էր՝ ամէն բոլոր պատրաստ զոհողութեան և աշխատանքի: Իրենց տունն ամենքին էր, բառի բուն նշանակութեամբ, միշտ բաց կուսակցական ընկերների առջև: Որպէս՝ հրճանք և ուրախութիւն կերակրող ընտանիքի բոլոր անդամների դէմքին անխտիր, երբ կուսակցական մի գործիչ դռնից ներս կը մտնէր. բնաւորութեան ինչպի՛սի նմանութիւն կար իր և ծնողների միջև: Առաքինութեան, մաքրութեան հաւաքածոյ երջանիկ տուն էր նրանց տունը: Հայրիկը թէև գիւղի պողոտում կրթութիւն ստացած երկուստարդ էր, բայց առողջ տրամաբանութեան աէր էր և ժողովրդի աչքին նրա կարծիքը անպայման նշանակութիւն ունէր: Մի-

ևնոյն ատեն լծւած էր կրթական և հասարակական այլ աշխատանքներ:

1917ին, երբ ռուսական զորքը «Երզրափոխականացի» թողնց զրուսւած վայրերի հետ և Ուրբխան, Հ. Յ. Իշանկոյեան կոմիտէն կանգնեց ժողովրդի կողքին: Նրա նախաձեռնութեամբ զուսարեց ներկայացուցական ժողով, ուր քննութեան դրեց երկու առաջարկ.

1) Միկնել ռուսներէ հետ, ինչպէս պնդում էին փոքր թիվ հարուստները: 2) Մնալ երկրում, բոլոր միջոցները ձեռք առնել վայելելու պարտիկ կատարութեան պաշտպանութիւնը, իսկ նրա անգորութեան դէպքում՝ դիմել ինքնապաշտպանութեան, ապրել կամ մեռնել պատուաւոր կերպով:

Երկար խորհրդակցուիլներէց յետոյ ժողովը միաձայն ընդունեց երկրորդ առաջարկը, որ պաշտպանում էր նաև ընկ: Հայրիկը, որ ստեղծւած պայմաններում դադարէ համարում էր մահ:

Հայրիկը երբ ընկերներով անմիջապէս իրեն դրեց կոմիտէի տրամադրութեան տակ սկսեց գինւորագրութիւն և ինքնապաշտպանութեան նախնական այլ աշխատանք: 15 հոկտեմբերի խումբ մեկնեց Շ... գէջը, ռազմավթերը և այլ զինւորական պիտոյքներ փոխադրելու համար: Սրանց մէջ էր և Հայրիկը, ինչպէս և սովորաբար որսորդ Յովհաննէսը, լուս և աջնիւ մի երիտասարդ, որ Իլիմանի յայտնի ճակատամարտին Անդրանիկի խմբից գերի էր ընկել տանկական զորքի ձեռք և զնդակահարութեան ատեն ճարպիկութեամբ կարողացել էր փարտէզի պատից ցատկել ու փախել տեղատարափ զնդակների տակ: Հետագային նա սպանեց խնդարւած ուղեղով մի հայ գինւորի կողմից:

Հակառակ ծովի փոթորկած լինելուն և արտակարգ ցրտին, Հայրիկն և ընկերները յաջողութեամբ կատարեցին իրենց վրա դրած պարտականութիւնը և գիշեր ու ցերեկ աշխատելով տեղ հասցրին անհրաժեշտ զէնք ու մթերքներ:

Շրջանում կազմեցին մարտական խմբեր, ժողովուրդը զինեց ինքնապաշտպանութեան համար: Որմբերը շրջում էին շրջանում և պաշտպանում ժողովրդին: Հայրիկը մարտիկների ոգին էր: Անվանու ո քաջ՝ նա միշտ ամենամտանգաւոր տեղն էր: Երբ բոլոր ճանապարհները կտրւած էին, Հայրիկը մի քանի ընկերով անցաւ Քաւրիք և իր վրա դրած պարտականութիւնը կատարելով՝ նորից վերադարձաւ:

Հնգյակեմ վասնդի ամպերը կուտակեցին Ուրմիայի, Սալմաստի ու Պոլի շրջանների վրա: Մի կողմից թաթարահամախորամական տարրերի հակահայ զորքերն ընթացքը, միւս կողմից թիւրքական յարձակումները դժուար էին դարձնել հայերի կանգը: Թիւրքերի դրոյումով դաւադրութիւն կազմեց ջերդ ցեղական Սմիկոն, որ յարձակեց հայերի վրա: Օղնութեան հասան թիւրք զորքերը, և սկսեց անաւասար կռիւր, որ տեղեց մօտ եօթ ամիս:

Հայրիկը որպէս ճիւղորդների քանձնդապետ միւս ճակատում էր, ոգևորող ու խրախուսող պէտք էր կուել՝ փրկելու համար պատիւը, կեանքի դնով պաշտպանելու օջախը, այլապէս փրկութիւն չկար: Չէ՛ որ սահմանից անդին ամբողջ արեւմտահայերի արևածղիակների ճննճերահասող դալիս հասնում էր և Պարսկաստան: Ի՞նչպէս հաւատալ Ալի Իհանսի փաշայի խոստումներին: Ալի Իհանսը դաւադրութեամբ մտել էր Արարատական և բարեք ու ապահովութիւն էր շուայում, եթէ ժողովուրդը զինաթափէր և անձնատուր լինէր: Սակայն, խաբուող կար. կռիւր անողը էր:

Պատերազմի ընթացքին Ուրմիայի և Սալմաստի միջև հեռախօսք տակաւին պատրաստում էր: Ձմեռ և ցուրտ եղանակ էր: Անհրաժեշտ էր վատանելի մէկը, որ լուր տանէր Սալմաստ: Հայրիկը պատրաստ էր անմիջապէս մեկնելու: Գնում ու վերադառնում է, իսկ մինչ այդ դուրսիւնը ճակատներում տարբեր կերպարանք է ստանում. անհրաժեշտ է լինում երկրորդ ան-

գամ սուբանդակ ուղարկել: Կէս գիշերին Հայրիկը մտնում է ներս թրջւած բայց առողջ. շար գրութիւն է ստեղծում. ո՛ւմ ուղարկել: Հայրիկը նորէն պատրաստում է, ձիւն փոխում և անմիջապէս մեկնում: Առաւօտեան նորից յետ է գալիս՝ իր ընթացքով հիացում պատմառեւիով անձնէր:

Երկար և անհաւասար մտաբանումից յետոյ, ժողովուրդը ուժապատ տեղի տեց ու նահանջեց դէպի Համալու, անդիլական աղեղնութեան շրջան: Հայրիկը Համալուում կորցրեց զօրը և ընտանեկան հոգով ծանրաբեռնւած՝ անցաւ Ղազախ, այս փաւրից, միշտ կուսակցական սրբազան պարտականութիւնը ունեցի վրա: Թուրքում եւս լայն համարանք ձեռք բերեց, որպէս մաքուր ու ներքառ դաշնակցական: Մասնակցեց Սմիկոյի ղէմ կազմակերպւած հայ կամաւորական խումբին, 1921ին: Կամաւորական այդ խմբի կազմաւորմանուց յետոյ իր համակուղացիները և ուրիշ ուրմեցիներին հետ միացած՝ որոնց գնալ Ուրմիա և պայտնական օջախը շէնցնել, փոխանակ թուրքի փողոցները թափառելու ու նոպատի փշրանքներով սնելու: Այդպէս էլ աշաւ:

Հակառակ իր ուժեղ և յաղթանդամ մարմնի, Հայրիկը հիւանդացաւ արագընթաց թոքախտով, որ և վերջ տեց նրա կեանքին, 1930թ. ամառն: Նրա վաղահաս մահը խոր վիշտ պատճառեց ամենքին, բայց, մասնաւոր, իր հայրենակիցներին և կուսակցական ընկերներին: Ի՞նչ երիտասարդ էր և աշխատելու եռանդով լեցուն:

ՍԱՍՈՒՆՑԻ

ՅՈՓՓՁԻ ՍԻՄՈՆ

Իսկական անունը Սիմոն Ջաֆարիան Մելիք-Յարսիւնան էր, ծնւած 1886 թ.ին Դարալազեազի Սես գիւղում: Համեստ ընտանիքի զաւակ էր: Փոքր հասակից ծնողները նրան ուղարկում են Ալմալուի շրջանի հասարակական դպրոցը, որտեղ սովորում է երկու տարի: Ապա, 18 տարեկան հասակում, թողնում է գիւղի դպրոցը և ծնողներից ծածուկ, իր բարեկամներից մէկի հետ անցնում է Բազու, այստեղից՝ Գորգոնի, Պեստրգորսկի, Վլադիկավկազ, Արմաւուր և ուրիշ քաղաքներ: Սօս մէկ տարի թափառելուց յետոյ, վերադառնում է Բազու իր հօրեկրօր Ենոք Մելիք-Յարսիւնանի մօտ և վերջինիս միջամտութեամբ կարողանում է մտնել Բազուի Թեքնիքական դպրոցը, որտեղ սովորում է մէկ տարի: Բայց այստեղ էլ չի կարողանում երկար մնալ: 1906 թ.ականին անցնում է Շուշի և մտնում թեմական դպրոցը: Մէկ տարի էլ այդտեղ մնալուց յետոյ, 1907 թ.ականին փոխադրւում է Թիֆլիս, ներսիսեան դպրոցը: Յաջորդ տարի, 1908 թ.ին, տեղափոխւում է Երեւանի թեմական դպրոցը, որ և աւարտում է 1909թ.

Դպրոցը աւարտուց յետոյ, Սիմոն անցնում է Պետրոզդարդ և պատրաստում է մտնել այդ օրերին նոր բացուող հոգե-ձեարդաբանական բարձրագոյն վարժարանը, 1911ին ընդունւում է բժշկական բաժինը, որտեղ սովորում է մինչև համախառնային պատերազմը, և 1914թ. հոկտեմբերին կնքադրւում է զօրահասարկ: Մեկնում է աւստրիական ճակատ և ծառայութիւն հրահրային մասում: Մասնակցում է Կրակովի և ուրիշ շրջանի կռիւներին և կարճ ժամանակայ ընթացքում լուս ուսումնասիրում հրամաժայից զորքը: Ծնորդին իր ընդունակութեան ու ճարպիկութեան, 1915 թ.ի ըսկզբներին սպայի ստաիֆում է ստանում և մասնակցում է գերմանական ու աւստրիական ճակատներում բազմաթիւ կռիւների: Շուտով, Սիմոնին, որպէս կովկասցու տեղափոխում էն Կովկաս և ուղարկում տանկական ճակատ, որտեղ մնում է մինչև 1916 թ.ը, երբ փոխադրւում է պարսկական ճակատ, ուր մնում է մինչև

Հոկտեմբերեան յեզաշրջումը: Երբ ուսական գործը լքում է ամբողջ ուղղմանակատը, Միմոնն էլ անցնում է Հայաստան և ընդհիշտ ներկում Հայրենիքին: Եւ Հայաստանի Հանրապետութեան օրով Միմոնը համարում էր լաւ թնդանօթածիզ սպայ: Տաճկական ճակատում, Բէօշիք-Աէզիի և այլ կռիւներում նա միշտ աչքի էր ընկնում իր մարտկոցով:

1919ի Հոկտեմբերի սկզբներին Հայաստանի կուսակցութիւնը Չանգեզուր է ուղարկում մի լեւնային մարտկոց իր բոլոր ամբարտորումով, Միմոնի հրամանատարութեան տակ: Միմոնը Չանգեզուր է հասնում Հոկտեմբեր վերջերին և անմիջապէս մասնակցում է Չանգեզուրի նոյեմբերեան կռիւն, որն իրումամբ հանգեցուրեան հերոսամարտ» անունն է կրում: Այդտեղ պարբէջանցիկ կռի զաշտ էին հանել 10 հազարի հասնող կանոնաւոր ուժեր և 5-6 հազար Հաջի Սամուրի և դաշտային մասի զինւած իւււթան, երկու դաշտային և վեց լեւնային Գնդանօթներով ու բազմաթիւ զնդացիւրներով: Միմոնը կարողացաւ լռեցնել թշնամու թրնգանօթներն, անպարծութեան դատապարտել զնդացիւրները և իւււճապի մատնել թշնամուն: Այս օրհասական և անհաւատար կռիւց յետոյ էր, որ Չանգեզուրի ժողովուրդը Լրդում էր Թոփչի Միմոնի անունով, իսկ

պարբէջանցիները երգ էին հիւսել:

Երբ Դրոս իր արշաւամբով մտաւ Չանգեզուր և Ղարաբաղ, Միմոնը Լնթարկեց Դրոսին, մտաւ նրա հրամանատարութեան տակ և մասնակցեց Զուլի, Մագրաշի, Շուռնուխի, Գեղայի Զորի կռիւներին՝ ամէն տեղ էլ իր խիզախութեամբ և հմուտ արեւտով յաղթող էր հանդիսանում: Դրոի նահանջից յետոյ, նա էլ անցաւ Երևան և մնաց մինչև Հայաստանի խորհրդայնացումը, մասնակցելով տաճիկների հետ ունեցած կռիւներին, իսկ Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, նա մարտկոցի կազմով, ջւււց Բազու, որտեղից անցաւ Թիֆլիս և չկարողանալով տանել բոլշևիկների գործած վայրագութիւնները, 1921թ. աշնանը ինքնասպանութիւն գործեց:

Միմոնը պաշտօնական Հայրենասէր և Հայաստանի բանակի լաւագոյն սպաներից մէկն էր: Մինչև իր կեանքի վերջին օրերը նա մնաց փարած Հայաստանի անկախութեան գաղափարին: Նրա մահը խոր յուզում պատճառեց նրան ճանաչող բոլոր Հայրենի, իսկ Չանգեզուրի ժողովուրդը պաշտամունքով յիշում է անվեր Թոփչի Միմոնին:

ԻԻՐԱ

Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ա Կ Է
 ԵՒ ՄԻՆՁԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄՆԷ

Մ. ՎԱՐԱՆԻՆԻՆ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ

ՀԱՏՈՐ Ա

Հիմնադրութեան մինչև Օսմ. Սահմանադրութիւն

(1890 -- 1908թ.)

Շուրջ 500 մեծադիր էջ 80 պատկերներ

Դիւր՝ Տրամա, Սիւրիա, Ռումանիա, Բալկարիա, Յունաստան՝ 40 Փրանկ:
 Ուրիշ երկրներ՝ 50 Փր. կամ 2 զոլար: Կարելի է նախօրօք բաժանորդագրուի:
 Դիւել «ԴՐՕՇԱԿ»ի հասցեով:

« Դ Ր Օ Շ Ա Կ » Ի
 Յաջորդ թիւը կը լինի միացեալ —
 Սեպտեմբեր—Հոկտեմբեր — եւ լոյս կը
 տեսնէ հոկտեմբերի սկզբին, 32 էջով

« Դ Ր Օ Շ Ա Կ » Ի
 Բաժանորդներէն եւ գործակալներէն կը
 խնդրենք՝ փութալ փակել առկախ մնացած
 հարչւները

« Դ Ր Օ Շ Ա Կ » - ԻՆ ԴՐԱՄ ՈՒՂԱՐԿԵԼ ՇԵՏԵՒԵԱԼ ՀԱՍՑԵՌՎ.
 L. TADEVOSIAN 71. AVE. KLÉBER, PARIS (XVI) FRANCE

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

ժընեփ և Լոզանի դարը (Մարգրական)	169	Թուրքիոյ շուրջ (Հրանտ-Սամուէլ)	182
Հայաստանի տնտեսական յանդիմները (Չանգի)	171	Կարմիր գծից ներս	186
Ամերիկեան ընտրապայքարը (Ասատուր)	174	«Բարի դար» թիւք գիւղում (Դ. Չարիկե)	189
Այրաբէնի բարեկարգումը Թուրքիայում	178	Մեր գանդը	190

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի

« Դ Ր Օ Շ Ա Կ » - Ի հասցէն՝

Թիւն արժէ 2 Փր. 50 ամսն.

Rédaction « DROSCHAK »
 71, ave. Kléber. PARIS (16e.)